№ 220 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 6 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

1910

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 6 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 220

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Հ Ի Մ Ն Ա Դ Ի Ր Գ Ր Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Խմբագրատան տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction «MSCHAK».

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ
3 ՌՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ռ., 6 և 7 ամսվ. 6 ռ., ամսակ. 1 ռ. Ամերիկա՝ տարեկան 6 դոլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ռ., Թիւրքիա՝ 120 ղրուշ։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամականիշով)։

Յայտարարութիւնների համար վճարում են. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.։ Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и Ко“ ֆիրմայի միջոցով Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Երկուշաբթի, հոկտեմբերի 4-ին Հադրութում (Գանձակի նահ.) վախճանվեց 2-րդ կարգի վաճառական

ԿԵԱՆՋՈՒՄ ԱԲԱԼԵԱՆՑԸ,

որի մասին խորին վշտով յայտնում են բարեկամներին և ծանօթներին հանգուցեալի որդիքը՝ Մարգար, Յովհաննէս, Նիկողայոս և Ալէքսանդր Աբալեանները։ Թաղումը տեղի կունենայ Հադրութում ամսի 7-ին, հինգշաբթի։ Նոյն օրը Թիֆլիսում, Մողնու ս. Գէորգ եկեղեցում կը կատարվի պատարագ և ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ։ Պատարագի սկիզբը առաւ. ժամը 10$^{1}/_{2}$-ին, հոգեհանգիստը ժամը 12-ին։

1153. 1—1

ՓՈԽԱՐՔԱՅԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Կովկասի Փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկով երկուշաբթի, հոկտեմբերի 4-ին, գիշերվայ ժամը 12-ին վերադարձաւ Թիֆլիս։

Անշուշտ, Կովկասի ամբողջ ազգաբնակութիւնը ուրախութեամբ կողջունէ Փոխարքայի գալուստը, որ գրաւական է, թէ նրա վարած խաղաղասիրական քաղաքականութիւնը և նրա ցանկութիւնները, իղձերը՝ մտցնել հետզհետէ Կովկասում անհրաժեշտ բարենորոգումները, մնացել և մնալու են իրանց ույժի մէջ, և թէ այն ջանքերը, որ ռուսական սև-հարիւրեակային շրջանները գործ էին դնում՝ հաստատելու Կովկասում գոլիցինեան մարդատեաց ռէժիմը, բաղխվել են ժայռերի և ջախջախվել։

Մենք յաճախ այս լրագրի էջերում քարոզել ենք այն միտքը, որ միայն արդարօրէն, հաւասարօրէն վերաբերվելով դէպի Կովկասի բոլոր ազգութիւնները, նկատելով ամենքին՝ և ռուսին, և հային, և վրացուն, և թուրքին՝ իբրև քաղաքացիներ և զաւակներ միևնոյն մեծ-հայրենիքի՝ Ռուսաստանի, թոյլ տալով ամեն մի ազգութեան՝ ինքնուրոյնութիւն իր ազգային մտաւոր-բարոյական-հոգևոր գործերի մատակարարութեան մէջ, մտցնելով անհրաժեշտ բարենորոգումները—կարելի կը լինի կապել երկիրը Ռուսաստանի և ռուսական կուլտուրայի հետ աւելի հզօր և անքակտելի կապերով, քան այնպիսի խիստ միջոցներով, որոնք միայն կարող են հեռ, ատելութիւն և գրգռումն արծարծել։

Փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկով, որի ռուսական հայրենասիրութիւնը անժխտելի է իր անցեալ պետական փառաւոր գործունէութեամբ, [illegible] սացաւ վերոյիշեալ ուղղութեամբ կառավարիչ, ուստի և կարողացաւ ոչ միայն Կովկասի խանգարված նորմալ կեանքը վերահաստատել, այլ և սիրով կապել նրա ազգաբնակութիւնը Ռուսաստանի հետ։

Մնում է այժմ, որ հետզհետէ իրագործվեն հերթական բարենորոգութիւնները, որոնք ծրագրված են Փոխարքայի զեկուցագրի մէջ։

Եւ այն րօպէին, երբ սև-հարիւրեակային շրջերի չար ոգիներից մինը՝ Պուրիշկևիչ՝ թոյլ է տալիս իրան ուղղել Փոխարքայի աջակից և դիւանատան կառավարիչ Պետերսօնին մի լպիրշ հեռագիր, ուղղված միւս կողմից և հայ ժողովրդի դէմ, Փոխարքայի վերադարձը պէտք է սրտագինս ողջունվի, իբրև ապացոյց, որ մարդատեաց և կեղծ-հայրենասէր Պուրիշկևիչների բոլոր երազները յօդս կը ցնդեն։

Ողջունում ենք Փոխարքայի գալուստը։

Հ. Առաքելեան

ՄՈՒՐՈՄՑԵՎԻ ՄԱՀԸ

Հեռագիրը գուժեց, որ Մոսկվայի համալսարանի նախկին պրօֆէսօր ռուս յայտնի իրաւագէտ և առաջին Պետական Դումայի նախագահ Մուրոմցեվ վախճանվել է։

Խորին կսկիծ և վիշտ պէտք է արծարծէ այս անակնկալ մահը բոլոր այն քաղաքացիների սրտի մէջ, որոնց համար թանգ է ռուսական գիտութեան զարգացումը և ռուս ժողովրդի ազատագրութեան գործը։

Մուրոմցեվը մէկն էր այն ականաւոր գործիչներից, որոնք ողջունեցին և ներգործական դեր կատարեցին այդ ազատագրութեան արշալոյսին։ Նա միևնոյն ժամանակ մէկն էր այն գիտնականներից, որոնք համարում են գիտութիւնը՝ համամարդկային սեփականութիւն և որոնք այդ գիտութեան մէջ են տեսնում ամեն մի ժողովրդի, ազգի զարգացումը և ույժը։

Մուրոմցեվը ուտոպիստ չէր, պատրանքների ետևից ընկնող չէր. նա դրական մարդ էր և ունէր դրական ոգի, ուստի և կարողանում էր, իբրև նախագահ առաջին Պետական Դումայի,—որ իբրև մի նոր, երիտասարդ հաստատութիւն, բնականաբար, ընկնում էր երբեմն ոգևորութիւնների և թռիչքների մէջ,—իր հմուտ և ղեկավարող ձեռքով սանձահարել թռիչքները, երբ տեսնում էր, որ այդ թռիչքները կարող են վնասներ տալ։

Եւ Մուրոմցեվի մահը ոչ միայն ծանր և անփոխարինելի կորուստ է ժողովրդական կամ սահմանադիր-ռամկավարական կուսակցութեան համար, այլ և ռուսական ամբողջ ինտելիգենցիայի համար, որովհետև ասպարէզից չքանում է մի լուրջ գիտնական, մի հզօր միտք, մի ձեռնհաս ույժ, որ դեռ կարող էր իր հայրենիքին և ժողովրդին մեծամեծ ծառայութիւններ մատուցանել։

Յարգանք արժանաւոր և բուն հայրենասէր գործչի յիշատակին։

Հ. Ա.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մոսկվա, 4 հոկտեմբերի

Յանկարծամահ եղաւ առաջին Դումայի նախագահ Մուրոմցեվը։ Համալսարանում և Մուրոմցեվի բնակարանում հոգեհանգիստներ կատարվեցին։ Դրված են բազմաթիւ պսակներ, ի թիւս որոց մինը Մոսկվայի կողմից։ (Հ. Գ.)

Պետերբուրգ, 4 հոկտեմբերի

Տեղեկատու բիւրօն հերքում է Տօլմաչեվի հրաժարականի մասին տարածված լուրերը։ (Հ. Գ.)

Օդեսսա, 4 հոկտեմբերի

Ցուցահանդէսը փակվեց։ Այցելողների թիւը 700,000 էր։ Կազմակերպող Կայսերական Տեխնիքական Ընկերութիւնը 80,000 րուբլի վնաս կրեց։ Վճռվեց ցուցահանդէսը վերսկսել գալեք տարի։ (Հ. Գ.)

Վիէննա, 4 հոկտեմբերի

Պատգամաւորութեան մասնաժողովի մէջ Կրամարժը, յիշելով Ֆրիդիւնգի գործի մասին, կշտամբեց արտաքին գործերի մինիստրութեանը դիւրահաւանութեան մէջ։ Էրենտալը պատասխանեց, որ Ֆրիդիւնգի գործի մասին երևցած յօդուածը գրվել է այն ժամանակ, երբ Աւստրո-Ունգարիայի և Սերբիայի լարված յարաբերութիւնների պատճառով երկիւղ կար ահագին կարևորութիւն ունեցող վճիռներից։ Ֆրիդիւնգի մասին տրված նիւթերի մէջ կային նաև այնպիսի փաստաթղթեր, որոնցից, թւում է, կարելի է օգտվել հանգիստ կերպով, որովհետև նրանք չէին հակասում այն բանին, ինչ որ ասւէին ամենից սերբական մամուլից, նաև սերբ կառավարութեան յայտարարութիւնից. նա կարող է դրականապէս յայտնել, որ այն րօպէները, որոնք պէտք է պարզվէին Ֆրիդիւնգի գործի մէջ, չեն շօշափում կառավարութեան վճիռը աննեկսիայի հարցում. այդ վճիռը վերջնականապէս ընդունվեց Թիւրքիայում սահմանադրութիւն մտնելու պատճառով, նաև այն աներկբայ շարժման պատճառով, որ նպատակ ունի զատել Բօսնիան միապետութիւնից. այդ շարժումը աջակցութիւն էր գտնում արտասահմանում. այստեղից անհրաժեշտութիւն ծագեց կանօնաւորել Բօսնիայի օրինական դրութիւնը. այժմ, վերադնահատութեան ժամանակ, այդ դրդապատճառները չեն զրկվի ստիպողական ույժից։ (Հ. Գ.)

Նոր-Օրլէան, 4 հոկտեմբերի

Մանագուայի մէջ անկարգութիւնները վերսկսվեցին։ Դրութիւնը կրիտիքական է։ (Հ. Գ.)

Պէկին, 4 հոկտեմբերի

Չինաստանի հարաւում գտնվող ամենախոշոր բանկ Իւանֆինժունը դադարեց փոխառութիւններ տալ։ Ընդ սմին շատ մանր բանկեր Պէկինում նոյն կերպ վարվեցին։ Նրանց օգնութեան է հասնում պետական բանկը։ Գաւառական պատգամաւորները երրորդ ուղերձի մէջ խիտ գոյներով են նկարագրում Չինաստանի կացութիւնը. դրսից նրան սպառնում են ռուս-եապօնական համաձայնութիւնը և Կորէայի աննեկսիան, ներսից՝ աղքատութիւնը, խուէարը, երկպառակութիւնները. վերջին երկու տարիները ձեռք առած սահմանադրական բարենորոգումները միայն աղաղակ բարձրացրին. բոլոր պետութիւնները դէպի Չինաստանը վերաբերվում են արհամարհանքով և յոռետեսութեամբ են նայում վերաքննութեան հնարաւորութեան վրա. միակ ելքը այս կացութիւնից հանդիսանում է պարլամենտի շուտափոյթ բացումը։ (Հ. Գ.)

Բեռլին, 4 հոկտեմբերի

Կրօնպրինցը կնոջ հետ Իօհաննիստալում թռչելու ժամանակ Վինցերսին նուիրեց գոհարազարդ գնդասեղ։ Թռիչքներ կատարեց 1,500 մետր բարձրութեան վրա։ (Հ. Գ.)

Բէլգրադ, 4 հոկտեմբերի

Բիւլլէտէն երեկ. ժամը 11-ից. գա[illegible]տօմները դէպի վատն են ցոյց տալիս. տաքութիւնը 40,5° է, զարկերակը՝ 92։

Պրօֆէսօր Խվօստէկը մեկնեց Վիէննա։

Առաւօտեան բիւլլէտէն. արքայորդին ներհման դրութեան մէջ է. գիտակցութիւնը այնքան էլ պարզ չէ. տաքութիւնը 40, զարկերակը 96 է։ (Հ. Գ.)

Կ. Պոլիս, 4 հոկտեմբերի

Մօնաստիրում պայթուցիկ նիւթերի պահեստ երևան գալու պատճառով երկաթուղիները պաշտպանվում են զօրքերով։ (Հ. Գ.)

Մ ո ս կ վ ա.—Միտրոպոլիտ Վլադիմիրի,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԻՆԸ ԵՒ ՆՐԱ ԱՊԱԳԱՆ*)

(Սօցիալ-տնտեսական էսքիզ)

Պատմականը, որով ապացուցվում է խնդրի էվօլիւցիօն բնոյթը, ամբողջովին հիմնված է գիտական այն լուրջ ուսումնասիրութիւնների վրա, որոնք կատարված են գլխաւորապէս մատերիալիստական ըմբռնողութեամբ։ Այստեղ նախապատմականն ու պատմականը օղակված են։ Անհրաժեշտօրէն արձանագրված են պատմական խոշոր երևոյթներից նրանք, որոնք կնոջ հասարակական ինստինկտների արտայայտման նշանաւոր փաստն են ապացուցանում։ Պատմական հնագոյն փաստերից՝ փակագծի մէջ առնված՝ դիտմամբ յիշեցինք հայ անցեալ իրականութիւնից կանանց մասնակցութիւնը հինգերորդ դարի հասարակական շարժման մէջ։ Իսկ նորագոյնից՝ արձանագրեցինք կանանց կօլլեկտիվ մասնակցութիւնը ֆրանսիական մեծ յեղափոխութեան մէջ։

Խնդրի էվօլիւցիօն բնոյթը ամբողջովին պայմանաւորված է տիրող սօցիալ-տնտեսական հաւաքական պայմաններով, որոնք և կազմում են սնող և աճող միջավայրի էութիւնը։ Ուստի իգական սեռի հասարակական-քաղաքական կացութիւնը քննեցինք նրա տնտեսական միջավայրի տեսակէտից։

Պատմական մասում որոշ տեղ յատկացրինք քրիստոնէական վարդապետութեան վերաբերմունքին դէպի նոյն սեռը, ի նկատի ունենալով հաւատարմութեան այն ուսմունքը, որը սիրոյ հետ շաղկապված՝ որպէս թէ կազմում է քրիստոնէութեան ձըգտումն ու նպատակը... Մանաւանդ այդ վարդապետութեան ներկայացուցիչների այն բնորոշումը, որով սեռերի անհաւասարութեան գաղափարի ձևակերպումը հասցրած է աստուածային պատգամի...

Ինչ վերաբերում է երրորդ մասին, այստեղ գլխաւորապէս ի նկատի է առնված խնդրի ժամանակակից բնոյթն ու պահանջների հնարաւոր իրագործումը ապագայում։

Կանգ առնենք մեր ընդհանուր եզրափակման վրա, ամփոփենք մտքերը։

Կնոջ ներկայ և ապագայ տիպը բնորոշելու համար, մենք անխուսափելիօրէն պիտի անցեալը կապենք ներկայի հետ, որովհետև կնոջ պսիխիքական տիպը առաջ և մասամբ այժմ ներկայացնում է մի ամբողջութիւն։ Նրա միջին տիպի հոգեկան կեանքը առաւել հարուստ է այժմ զգացմունքով, քան դատողութեամբ. նրա մտաւոր աշխարհը տակաւին չէ ենթարկվել այն շերտաւորման, որը ձեռք է բերել դարերի փորձերով տղամարդը։

Այստեղ միջանկեալ պէտք է ասենք, որ այս բնորոշումը ոչ մի պարագայում կնոջ անհատական էութիւնը չէ վարկաբեկում. շեշտում ենք այս հանգամանքը այն հիման վրա, որ մեր դրական վերաբերմունքի նկատմամբ մեր բնորոշումը հակասութիւն չը համարվի։ Տրամաբանական սխալ գործած կը լինէինք, եթէ այլ կերպ վերաբերվէինք. եթէ կնոջ ներկայ տիպը համարէինք տղամարդուն հաւասար իր զարգացողութեամբ և փորձառութեամբ, իրականութեան և անաչառութեան դէմ մեղանչած կը լինէինք. և ինչու համար էին այն ժամանակ մեր պահանջները հաւասար պայմաններ ստեղծելու նկատմամբ։ Եթէ պատմական մասում մենք շեշտել ենք կնոջ դրական և հաւասար մասնակցութիւնը մասսայական շարժումների մէջ, ապա մենք կամեցել ենք ապացուցանել, որ կինը հասարակական ինստինկտով և մտաւորապէս զարգանալու պաշարով՝ ֆիզիօլօգիական տեսակէտից՝ տղամարդուց ստոր չէ կանգնած։ Այդ ֆիզիօլօգիական պաշարով օգտվելու և արտայայտվելու համար անհրաժեշտ է ընդլայնել ինքնուրոյնութեան և համագործակցութեան ասպարէզները թէ հասարակական և թէ տնտեսական կեանքում։ Չը պէտք է մոռանալ, որ փշոտ և տատասկոտ վայրում օգտակար բոյսերի ծիլերը խեղդվում են։

Այդ հիման վրա տնտեսական-սօցիալական կեանքում տղամարդու մղած ինքնուրոյն կռիւը նրան դարձրել է ճարպիկ և արթուն՝ գործնական կեանքում, իսկ ինտելլեկտով, հոգեպէս բարձր՝ տեսական աշխարհում (համապատասխան չափով առաջին պայմանին)։ Տղամարդը գոյութեան կռւում եղել է ներգործական, ակտիվ, իսկ կին՝ կրաւորական, պասսիվ։ Կինը ընկել է տղամարդու տիրապետութեան ներքոյ։ Նա զրկվել է ինքնուրոյնութիւնից։ Անսահման կրաւորականութիւնը բազում դարեր առաջ ստեղծել է կնոջ հոգեկան ամբողջացրած, զգացմունքի և մտքի միացած տիպը, որը և ժառանգաբար անցել է՝ սօցիալ-տնտեսական միևնոյն պայմաններում՝ յաջորդ սերունդների յատկապէս իգական սեռի ներկայացուցչուհիներին։ Տընտեսական ու քաղաքական կախումը կնոջը մեխել է ընտանիքին. հասարակական կեանքից նրան պահել են հեռու, առանձնացրած. ընտանեկան խիստ կղզիացման մէջ կնոջ հասարակական ինստինկտը զարգացած է խիստ սահմանափակ չափով և, յամենայն դէպս, ինտենսիւ կերպով արտայայտվել է հասարակական աղէտների և համաշխարհային յեղափոխութիւնների ժամանակ։ Նեղ, սպեցիֆիկ դաստիարակութիւնը կնոջը դարձրել է մանրակրկիտ, մինչդեռ համեմատաբար ազատ պայմանների մէջ սնվող տղամարդիկ հասարակական և մասնաւոր կեանքում առաւել համբերատար են և տանելի։

Հէնց նոյն միակողմանի և խիստ նեղ դաստիարակութիւնն ու կրթութիւնը, որ ստանում են կանայք, նրանց մտաւոր հօրիզոնը չէ լայնացնում. այդ պատճառով կնոջ մտաւոր ընդունակութիւնը կօնկրետ և զգացողական է առանձին երևոյթների նկատմամբ, մինչդեռ նրանց տարրերի սինթէզը՝ դժուար ըմբռնելի։ Մանաւանդ այստեղ խոշոր դեր է խաղում ժամանակակից դաստիարակութեան մի կէտը՝ մտաւորի առաւել բարդ շերտաւորման տեսակէտից, այն է՝ «կանացիութեան» գաղափարը, որը խորապէս արմատացել է թէ տղամարդու և թէ կնոջ գիտակցութեան մէջ։ Եւ հասարակական միջին գիտակցութիւնը «կանացիութիւն» գաղափարով հասկանում է կնոջ պսիխիքայի միմիայն բացասական, տակաւին անզարգացած գծերն ու գլխաւորապէս այն յատկութիւնը, որը տղամարդուն ֆիզիքական հաճոյք է պատճառում։

Սակայն այդ հասկացողութիւնը, կարծիքը չափազանց պահպանողական մտքի արդիւնք է, նոյնիսկ կրում է դօգմատիկ բնոյթ՝ «կանացիութիւնը», այդ մտքով իբր անփոփոխ երևոյթ։ Այդ մտքի սակայն հիմունք ու յենակէտ կարող է ծառայել բացառապէս կնոջ ստրկացման մռայլ անցեալը, բայց ո՛չ ներկան, որտեղ արդէն ծագում է արշալոյսը, և ո՛չ ապագան, որը կատարելապէս պայծառ ու լուսաւոր լինել է խոստանում։

Այն հակադրութիւնը, որ երբեմն չափազանցված գոյներով է հրապարակ նետվում ստեղծագործող-ներգործական տղամարդու և ըմբռնող-կրաւորական կնոջ նկատմամբ, ինչպէս շատ անգամ ենք կրկնել, հետևանք է կանանց համար ստեղծված պատմական-կուլտուրական ծանր պայմանների։ Յամենայն դէպս կնոջ աննախանձելի կացութիւնը դօգմա և իդէալ դարձնելն ու նրա բնական զարգացման դէմ անբնական խոչընդոտներ ստեղծելը առնուազն խոշոր թիւրիմացութեան արդիւնք է։ Չը պէտք է մոռանալ, որ ներկայ կնոջ միջին տիպը՝ շատ անգամ իր պսիխիքայով տղամարդուն հաւասար՝ իր զարգացման վերջին խօսքը չէ։ Եթէ կինը տակաւին ցածր է տղամարդուց, ապա նա պիտի ժամանակի ընթացքում աստիճանաբար իւրացնէ այն, որով արդէն օժտված է տղամարդը մտաւոր տեսակէտից։ Ահա այն դէպքում ներկայիս «ընդօրինակութեան» ճիգը խսպառ կը վերանայ, մանաւանդ երբ սօցիալական պայմանները կնոջ համար հաւասարարժէք միջավայր կը ստեղծեն։

Կինը կը դառնայ առաւել ինքնուրոյն, առաւել ներգործական, անվախ կը ձգտի արտայայտելու իր մարդկային անհատականութիւնը։ Կնոջ հասարակական էվօլիւցիան արդէն պարզօրէն ակնյայտնի է։ Եթէ գիտական ասպարէզում հանդէս են գալիս բանաստեղծների երգած սուբեկտիւ «կանացիութիւնը» պաշտպանող գործակալներ, հետևաբար և կնոջ հոգեկան աշխարհի շերտաւորման հակառակորդներ, ապա նրանց փորձերը պիտի ապագայում յայտարարվեն սանտիմենտալ և փշրվեն կնոջ ընդհանուր առաջադիմութեան, զարգացման առջև. կեանքի անխուսափելի առաջխաղացութեան ընթացքը կանգ չի առնի մժղուկային հոգեւորականութեան, սուինկների և հետաքրքրվողների ներկայութեամբ Պուրիշկեվիչը կարդաց իր պօէման ոտանաւորներով «Записки туриста». Գլխաւոր գործող անձերն են «մասօնները», «ժիդերը» և «յեղափոխականները»: Այն տեղերը, որտեղ խօսվում է կանանց մասին, Պուրիշկեվիչը չը վստահացաւ կարդալ կրօնաւորների ներկայութեամբ: Նրանից յետոյ ասպարէզ եկաւ Վօստորգով քահանան և խօսեց պորտուգալական յեղափոխութեան մասին: «Ռուս հասարակութեան համակրանքը յեղափոխութեան,— ասաց նա ի միջի այլոց,— չան է հանրապետականութեան»:

---

*) Տես «Մշակ» № 219.

«Р. Слово» լրագրում տպված է Զէլիմխանի նամակը ռոտմիստր Դոնուգաէվին, որ ընդհարում ունեցաւ Զէլիմ-խանի խմբի հետ: Զէլիմ խանը արդարանում է և ասում, որ ինքը պաշտպանում է աղքատներին, ընդգծում է, որ նա և Դոնուգաէվը եղբայրներ են, և հարցնում է, թէ ինչու Դոնուգաէվը իրան հակառակ գնաց: («Б.»)

—

Զէնստոխով.—Վանքում կատարվեցին նոր խուզարկութիւններ: («Б.»)

—

Պետերբուրգ.—Պետական Դումային ներկայացված նւմտի նախահաշւով եկամուտները հաշւված են 2½ միլիարդ րուբլի, ծախքերը 123½ միլիոնով պակաս են. փոխառութիւններ մտադրութիւն չը կայ կնքել: 1909 թւին պետական փոխառութեան հատուցումները կազմում են 393 միլիոն, Պարսկաստան ուղարկված զօրքերի վրա ծախսվել է 655,000 ր., Պետական Դումայի պահպանութեան համար 180,000 ր. և Դումային կից մինիստրական պավիլիոնի վրա 20,000 ր.: Նորին Մեծութեան յայտնի ծախքերը կազմում են 9 միլիոն րուբլի: Սենատորական քննութիւնները 137,000 ր.: Ներքին գործերի մինիստրութեան անյայտ մասնաւոր անձանց տրված է նպաստ 130,000 ր., «Моск. Вѣд.»-ի մէջ յայտարարութիւններ տալու ծախսված է 184,000 ր., Պոլտավայի յօբելեանական ծախքերն են 517,000 րուբլի, որով ոստիկանական և գինւորական հսկողութիւնը նստել է 400,000 ր., ֆինլանդական մամուլի վրա հսկողութիւնը արժէ 13,000 ր.:

Պարզվում է, որ ժողովրդական լուսաւորութեան մինիստր Կասսոյի թեկնածութիւնը առաջարկել էին նացիոնալիստները: («Б.»)

—

Օդեսսա.—Գեներալ Տօլմաչէվը կանչվեց Պետերբուրգ. լուր է պտտում, որ նա հրաժարական է տալու: («Б.»)

—

Չելեաբինսկ.—Պոստային կողոպտման համար եօթ հոգու գինւորական դատարանը [illegible]

—

Մադրիդ.—Թագաւորն արգելեց Բարցելօնայում տօնել գնդակահարված պրօֆեսօր Ֆերրերի յիշատակը: Ֆերրերի գնդակահարութեան տարեդարձն անցաւ հանգիստ. գերեզմանատանը ժողովվել էին 10 հազար մարդ: («Б.»)

—

Լոնդոն.—Անյայտ անձեր սպանական դեսպանատան շինութեան դուռը և մայթը ներկել էին կարմիր գոյնով: («Б.»)

—

Բեռլին.—Մօաբիտի անկարգութիւնների համար պատասխանատւութեան են ենթարկվում 77 հոգի, որոնցից 40-ը սօցիալ-դեմօկրատներ են: («Б.»)

—

Նիւ-Եօրկ.—Ռուզվէլտը աէրօպլանով թռաւ: («Б.»)

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԲԱՆՒՈՐՆԵՐԻ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

—

Պարիզ, 4 հոկտեմբերի

Հաւասը հերքում է լրագիրների հաղորդածը՝ երբ Օկսէրում երկու օֆիցերներ մերժեցին հնազանդվել գործադուլի ժամանակ: Գործադուլային կօմիտէտը տեղեկացրեց Բրիանին, որ իր վրա է վերցնում Բուա-դէ-Վէնսէնում վաղը տեղի ունենալիք ցոյցի պատասխանատւութիւնը: Կօմիտէտը երաշխաւորեց, որ կարգ ու կանօնը չեն խախտի, Պարիզի միջով երթ չի լինի: Կառավարութիւնը այնուամենայնիւ արգելեց ցոյց կազմել: Բրիանի կարծիքով ցոյց կազմակերպողները աշխատում են նրան տալ մարտահրաւէրի բնաւորութիւն, յոյս ունենալով՝ որ գործադուլը չի վերջանայ առանց կարգ ու կանօնը խախտվելու և առանց միջադէպերի: Ձեռք են առնված լուրջ միջոցներ հակազդելու ցոյցին: Ոստիկանութիւնը, իմանալով որ «Լիբերտէ» լրագրի շինութեան մէջ լինում են մարդիկ ռումբերով, խուզարկութիւն կատարեց և ձերբակալեց լրագրի խմբագրին, գրասենեկապետին, նաև մի մարդու, որ փորձում էր թագցնել մի ծրար 3 կասկածելի անօթներով:

Գիշերվայ ժամը 1 և 25 րօպէին պայթեց մի ռումբ մունիցիպալ խորհրդական Մասսարի կացարանի առաջ: Պերէյրա զբօսավայրում մեծ աւերածութիւններ են: Մարդկային զոհեր չը կան:

Գործադուլային կօմիտէտը հրաժարվեց ցոյց կազմել Բուա-դէ-Վէնսէնում և միտինգ սարքեց աշխատանքի բօրսայի մօտ: Պաշտօնապէս հաղորդվում է, որ կանօնաւոր ծառայութիւնը հիւսիսային և արեւմտեան գլխաւոր երկաթուղագծերի վրա միանգամայն ապահով է, քաղաքային գծերի վրա աշխատանքներն այնքան էլ կանօնաւոր չեն: (Հ. Գ.)

—

Պարիզ.—Սօցիալիստական «Humanité»-ի խմբագրատան մէջ կառավարութեան անունով կալանաւորվեց կենտրօնական գործադուլային կօմիտէտը: Նրա տեղ իսկոյն կազմվեց ուրիշ կօմիտէտ: Սօցիալիստները թռուցիկով սպառնում են մինիստր-նախագահ Բրիանին և մատնանշում են, որ նրա օրօք կարգերը յիշեցնում են [illegible] ասված է թռուցիկների մէջ,—ձեռք են առել նրանք, որոնք երբեմն քարոզում էին բանւորական յեղափոխութիւն: Թող ամօթ լինի ժողովրդի ներկայացուցիչներին, եթէ թոյլ կը տան ոտնահարել նրա իրաւունքները»:

Սօցիալիստ-պատգամաւորները պահանջում են գումարել պարլամենտը: («Б.»)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

Լօնդօն, 4 հոկտեմբերի

Անգլիական կառավարութիւնը, ի նկատի ունենալով Հարաւային Պարսկաստանում տեղի ունեցող անկարգութիւնները, դիմեց պարսից կառավարութեան մի նօտայով, որը «Թայմսի» ասելով, պարունակում է ճշգրիտ ցուցմունք այն միջոցների, որպիսիները Անգլիան ձեռք կառնէ որոշ անբարեյաջող հանգամանքներ ստեղծվելու ժամանակ: Այս միջոցները վերջ կը դնեն չը միջամտելու քաղաքականութեան: (Հ. Գ.)

—

Սպահան, 4 հոկտեմբերի

Կաշան քաղաքի պաշարումը շարունակվում է: Երկու կողմից կան բազմաթիւ սպանվածներ և վիրաւորներ: Պաշարողներին օգնութեան եկան թընդանօթներ: Բախտիարների կողմից երկիւղ կայ քարուքանդ անելու քաղաքը: Հ. Գ.)

—

Թաւրիզ, 4 հոկտեմբերի

Ղարադաղից յուզիչ տեղեկութիւններ են ստացվում Ռահիմ-խանի որդի Բեօյուք-խանի կողոպուտների մասին: (Հ. Գ.)

—

Թեհրան.—Զարդ կերած Ամիր-խանի 1,200 մարդկանցից մնացին միայն 200 ը: («Б.»)

ՊՈՐՏՈՒԳԱԼԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

—

Լիսաբօն, 4 հոկտեմբերի

Վաղը կը հրատարակվի մի հրովարտակ՝ պէրերի պալատը, պետական խորհուրդը, ազնուականական տիտղոսները վերացնելու, Բրագանցեան դինաստիան արտաքսելու, բարեգործական հաստատութիւնները աշխարհիկ իշխանութեանը յանձնելու մասին: (Հ. Գ.)

—

Լօնդօն, 4 հոկտեմբերի

Թագաւորական զոյգը մտադիր է շաբաթ օրը այցելել Մանուէլ թագաւորին և Ամէլիա թագուհուն Վուդնորտօնում: (Հ. Գ.)

—

Ջիբրալտար, 4 հոկտեմբերի

Մարիա Պիան Օպօրտի դքսի հետ իտալական նաւով մեկնեցին Սպէցիա, յետոյ Մանուէլը և Ամէլիան «Վիկտօրիա և Ալբերտ» զբօսանաւով մեկնեցին Անգլիա: (Հ. Գ.)

—

Մադրիդ, 4 հոկտեմբերի

Հանրապետականները ցոյց կազմեցին պորտուգալական հանրապետութիւնը տօնելու նպատակով և անցան մայրաքաղաքի փողոցներով: Մի հանրապետական պատգամաւոր ճառ արտասանեց և առաջարկեց հեռանել Պոր- [illegible] հանգիստ ցրվեցին: (Հ. Գ.)

—

Լիսաբօն.—Նախկին մինիստր-նախագահ Սուզան ընդունեց հանրապետութիւնը և գլուխ կանգնեց պահպանողական-հանրապետական կուսակցութեան:

Պորտուգալական դեսպանի պաշտօնը Վատիկանում՝ վերացվեց:

Եկեղեցական տօները կառավարութիւնը փոխարինեց աշխարհականով: («Б.»)

—

Տ. Նազարեանը խնդրում է մեզ տպել հետեւեալը.

«Մշակի» 217-րդ համարում «Р. В.»-ից քաղված տեղեկութեան մէջ մի անճշդութիւն կայ: Բրագան (Théophilo Braga) ոչ թէ Լիսաբօնում գիտութիւնների ակադեմիայի անդամն է, այլ նրա պրեզիդենտը և այսօր հանրապետութեան ժամանակաւոր նախագահը: Théophilo Braga նշանաւոր գիտնական-բանաստեղծ-մատենագրի նախագահութեամբ կազմվեց Լև Տօլստոյին 1908 թ. մատուցվելիք ուղերձը, որ ես անձամբ ներկայացրի Եասնայա Պօլեանայում յօբելեար Տօլստոյին հէնց այն օրը, երբ մեր մայրաքաղաքների լրագիրները հրատարակել էին իր մայրենի եկեղեցու անունից ռուս հոգեւորականութեան նզովքն ու անէծքը նրան: Ուժասպառ ծերունու շրթունքներին երևաց ժպիտ և գոհունակութեամբ լսելով Լիսաբօնի Գրականութեան Արուեստի և Խաղաղութեան Միջազգային Մնայուն Կոմիտէի որոշումը՝ իրան պատուաւոր անդամ ընտրվելը, ուրախ ընդհատեց ինձ՝ «Да...д.» կարդալով ուղերձի տակ Th. Braga-ի, Mag. Lima-ի, Machado Bernardino-ի և այլ և այլ շատ նշանաւոր գիտնականների, գրականագէտների ընդարձակ ցուցակը:

«Այդ ուղերձը և Ar. Lima-ի՝ Լև Տօլստոյին ուղղած ձօնը կը տպագրվեն «Տարազում» մի շարք մանրամասնութիւնների հետ և լոյս կը տեսնեն օրերս»:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ ՄՈՒՏՔԸ ԹԻՖԼԻՍ

—

Կովկասի Փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրօնցօվ-Դաշկօվը իր ամուսնու հետ հոկտ. 4-ին, երեկոյեան ժամը 12-ին, արտակարգ գնացքով Բալաջարի կայարանի վրայով ժամանեց Թիֆլիս:

Կոմսի հետ էին նրա շքախմբի անդամները:

Թիֆլիսի նահանգի սահմանագլխին Փոխարքային դիմաւորեց նահանգապետ Լօզինա-Լօզինսկին, Բալաջարի կայարանում անդրկովկասեան երկաթուղիների կառավարիչ գ.-մ. Նէյգէբաուէրը, ժանդարմների պետ գնդապետ Աստաֆիէվը, Բագուի քաղաքապետ փոխ-գնդապետ Մարտինովը և այլք:

Թիֆլիսի կայարանում, գնացքի գալուց առաջ, ժողովվել էին պաշտօնական անձինք իրանց կանանց հետ, դասային և հասարակական հաստատութիւնների ներկայացուցիչներ: Եկել էին նաև ուղղափառ, հայլուսաւորչական և մահմէդական հոգեւորականութիւնները:

Հէնց որ գնացքը կանգ առաւ, վագոնից դուրս եկան կոմսը և կոմսուհին: Կօմենդանտ գ.-մ. Ջիրկօվը նորին պայծառափայլութեանը ներկայացրեց յայտագիր:

Ապա կոմսին ողջունեցին աջողութեամբ տեղ հասնելու առիթով էկզարխ Ինոկէնտի արքեպիսկոպոսը, Վրաստանի հայ թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոսը, նահանգական ազնուականութեան պարագլուխ Դաւիդօվը, քաղաքագլուխ Ալ. Խատիսեանը, որոնք կոմսուհուն մատուցին ծաղկեփնջեր:

Շնորհակալութիւն յայտնելով ողջունողներին, Փոխարքան իր ամուսնու հետ մտաւ արքայական սենեակները, ուր նրանց ողջունեցին տիկինները:

Գիշերվայ ժամը 12 և 20 րօպէին գեներալ-ադիւտանտ կոմս Վօրօնցօվ-Դաշկօվը և կոմսուհին աւտօմօբիլով մեկնեցին պալատ, շրջապատված պահակ-կօզակներով:

Ս. Ա. ՄՈՒՐՈՄՑԵՎ

—

Հեռագիրը գուժեց, որ յայտնի իրաւաբան և Ռուսաստանի առաջին Դումայի նախագահ Սերգէյ Անդրէեվիչ Մուրոմցեվ վախճանվեց Մոսկվայում:

Մուրոմցեվ ծնվեց Պետերբուրգում 1850 թւի սեպտեմբերի 23-ին, հին ազնուական ընտանիքում. սովորում էր Մոսկվայի 3-րդ գիմնազիայում և Մոսկվայի համալսարանում, լսում էր դասախօսութիւններ Գէտտինգէնի համալսարանում: Մագիստրոսի դիսերտացիան պաշտպանելուց յետոյ «Պահպանողականութեան մասին հռօմէական իրաւունքի մէջ» 1875 թւին, Մուրոմցեվը հռօմէական իրաւունքի դոցենտ ընտրվեց Մոսկվայի համալսարանում, որպէս յաջորդ Կրիլովի: 1877 թւին դոկտորի աստիճան ստանալուց յետոյ նախ էքստրա-օրդինար, և ապա օրդինար պրօֆեսոր նշանակվեց նոյն ամբիոնի: 1879 թւին նա յանձն առաւ «Юрид. Вѣстникъ» ամսագրի խմբագրութիւնը, որը և շարունակեց մինչև ամսագրի դադարումը 1892 թւին. երկար տարիներ Մոսկվայի իրաւաբանական ընկերութեան նախագահն էր: Նա 1880—81 թւականներին Մոսկվայի համալսարանի պրօրեկտօրի պաշտօնն ունէր: Եռանդուն մասնակցում էր քաղաքային և զեմստվօյի գործերում որպէս Մոսկվայի և Տուլայի զեմստվային ժողովների և Մոսկվայի քաղաքային ձայնաւոր: 1884 թւին, իրանից անկախ պատճառներով, հարկադրված էր թողնել ամբիոնը և Մոսկվայի դատաստանական պալատի շրջանի երդւեալ հաւատարմատարների շարքը մտնել:

Մուրոմցեվի 8 տարվայ պրօֆեսորական գործունէութիւնը վերին աստիճանի արդիւնաւէտ էր որպէս գիտա-գրականական, նոյնպէս և ուսումնական տեսակէտից: Մուրոմցեվը ցոյց տուեց իրան ինքնուրոյն մտածող և փայլուն դասախօս և առաջին տեղերից մէկը գրաւեց ֆակուլտէտում Զուպրովի և Մ. Կովալեվսկիի կողքին:

Մուրոմցեվի ուսուցչական գործունէութիւնը խորին հետքեր թողեց նրա աշակերտների մէջ: Նրա հեռանալը ամբիոնից մեծ կորուստ էր Մոսկվայի իրաւաբանական ֆակուլտէտի համար:

Որպէս իրաւաբան քաղաքագէտ, Մուրոմցեվ յաճախ ասպարէզ էր գալիս մամուլի և իրաւաբանական ընկերութեան մէջ և զօրեղ կերպով պաշտպանում էր այն միտքը, որ իրաւունքը և կեանքը պէտք է սերտ կապ ունենան միմեանց հետ, և որ իրաւաբանի պարտաւորութիւնն է ժամանակի լաւագոյն կուլտուրական իդէալների պաշտպանը և հովանաւորը լինել:

Առաջին Դումայի նախագահ ընտրվեց և Դուման արձակվելուց յետոյ Վըբորգեան կոչը ստորագրելու համար դատապարտվեց երեք ամսվայ բանտարկութեան:

ԱԼ. ԲԱԼԱՆԹԱՐԸ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

—

Պետերբուրգ, 26 սեպտեմբերի

Անասնաբուծական համագումարը փակվելուց յետոյ, Ալ. Բալանթարը, որպէս պաշտօնական նախագահ, մի շարք զեկուցումներ ունեցաւ թէ պետական և թէ հայ հասարակական հիմնարկութիւններում:

Այսպէս, օրինակ, ամսիս 22-ին Ալ. Բալանթարը պաշտօնապէս ընդունվեց երկրագործական և հողային շինարարական գլխաւոր կառավարիչ հօֆմէյստեր Ալեքսանդր Վասիլևիչ Կրիվօշէինի կողմից, որին մանրամասնաբար ծանօթացրեց համագումարի հետ, շեշտելով այն հանգամանքի վրա, որ անհրաժեշտ է 1) հրատարակել համագումարի բոլոր աշխատութիւնները, 2) հրաւիրել առաջիկայ փետրվարին, ըստ համագումարի որոշման, մասնագէտ անասնաբոյժերի համառուսական խորհրդակցութիւն և 3) աջակցել համագումարի միւս որոշումների շուտափոյթ իրականանալուն կեանքի մէջ:

Ա. Վ. Կրիվօշէինը, որ մեծ հետաքրքրութեամբ լսում էր Ալ. Բալանթարին, ասաց.

«Չափազանց ուրախ եմ, տեսնելով որ համագումարը այդքան բեղմնաւոր հետեւանքներ է ունեցել: Պէտք է ասել ձեզ, որ մենք վերջին ժամանակներս սկսել ենք առանձին ուշադրութիւն դարձնել առհասարակ գիւղատնտեսութեան վրա, և այս մօտիկ ժամանակներում, յոյս կայ, կը հրաւիրվի առանձին գիւղատնտեսական և երկրագործական մինիստրութիւն: Ծրագիրն այդ մինիստրութեան՝ արդէն կազմված է, և ես յոյս ունեմ, որ այնտեղ, երբ նա կը ստանայ օրինական սանկցիա, նոյնպէս և անասնաբուծութեան վերաբերեալ եղած խնդիրները կը ստանան մեծ զարգացում: Իսկ ինչ վերաբերվում է համագումարի կատարած որոշումներին, մենք առանձին ուշադրութեամբ կաշխատենք մի առ մի իրագործել դրանց կեանքի մէջ»:

Այնուհետև խօսակցութիւնը ստանում է զուտ մասնաւոր բնաւորութիւն, որտեղ Կրիվօշէինը յայտնում է իր հրճուանքը տեսնելով Ալ. Բալանթարին իրա մօտ, նկատելով որ ինքը նրա երեսնամեայ գործունէութեան հետ շատ լաւ ծանօթ է և մինչև օրս էլ շարունակում է զբաղեցնել իրան՝ Ալ. Բալանթարի գործունէութեան ամեն մի երևոյթը:

Այնուհետև Ալ. Բալանթարը անցնում է գիւղական էկօնօմիայի դեպարտամենտը, որտեղի իշխանաւորներին ծանօթացնում է կովկասեան տնայնագործութեան հետ ընդհանրապէս և Հայ Տնայնագործ. և Գիւղատնտ. Ընկերութեան գործունէութեան հետ մասնաւորապէս:

Դեպարտամենտի գլխաւոր կառավարիչը, լսելով այդ ընկերութեան տնտեսական խղճալի դրութիւնը, խոստանում է առաջիկայում նիւթապէս օգնութեան գալ և ցանկութիւն է յայտնում, որ այնուհետև այդ ընկերութեան կողմից պաշտօնական դիմումներ անվեն կառավարութեան:

Անցնելով դեպարտամենտի V բաժանմունքը, որտեղ զուտ գիւղատնտեսական-դպրոցական գործերն են վարում, Ալ. Բալանթարը ցանկութիւն է յայտնում ծանօթանալու կովկասեան գիւղատնտեսական բարձրագոյն կուրսեր հիմնելու ծրագրի հետեւանքների հետ, որ սրանից 2 տարի առաջ մշակել են Թիֆլիսում և, տեղական իշխանութեան միջոցով, դիմում են արել կառավարութեան ի հաստատութիւն:

Այս մասի կառավարիչը յայտնում է, որ դրանք ոչ մի ծրագիր չեն ստացել եւ նոյնիսկ տեղեկութիւն անգամ չունեն տեղական իշխանութիւնից այդպիսի մտադրութեան մասին:

Սա շատ բնորոշ կէտ է մեր տեղական իշխանաւորներին հասկանալու համար:

Այստեղից գնում է դեպարտամենտի Va մասնաճիւղը, որտեղ վարում են Ռուսաստանի գիւղատնտեսական ազատ կրթութեան գործերը (այն է՝ հասարակական դասախօսութիւնների, ամառային սիստեմատիկ կուրսերի և այլն), և ծանօթացնում է այդ մասի գլխաւոր կառավարիչ Արշակ Շահնազարեանին՝ Կովկասում տեղի ունեցած ամառային դասախօսութիւնների ու նրանց կարիքների հետ:

Ա. Շահնազարեանը, լսելով այդ, առաջարկում է կուրսեր կազմակերպող մարմնին՝ դիմումներ անել կառավարութեան, որից յետոյ ինքը խոստանում է բաւարարութիւն տալ յարուցված բոլոր հարցերին և կարիքներին:

Սրանով էլ վերջանում են Ալ. Բալանթարի պաշտօնական անձանց հետ ունեցած այցելութիւնները:

—

Միւս օրը, ամսիս 23-ին, Պետերբուրգի եկեղեցական խորհրդի անդամները պաշտօնապէս հրաւիրում են Ալ. Բալանթարին՝ Հայ Գիւղատնտ. և Տնայնագ. Ընկերութեան գործունէութեան հետ ծանօթանալու նպատակներով:

Ալ. Բալանթարի այստեղ արած զեկուցումը, աւելի շուտ՝ հաշւետւութեան բնաւորութիւն էր կրում այն 2,000 րուբլու, որ սրանից մէկ տարի առաջ յիշեալ ընկերութիւնը ստացել էր իբրև նուիրատւութիւն, որից յետոյ զեկուցումը անցնում է ներկայ դրութեան բնորոշման և առաջիկայ գործունէութեան նոր ծրագիրների հետ ծանօթացնելու խնդրին:

Խորհրդի անդամները մեծ հետաքրքրութեամբ ծանօթացան ջուլհակագործութեան այն նմուշների հետ, որ Ալ. Բալանթարը բերել էր իր հետ:

—

Ամսիս 25-ին Ալ. Բալանթարը նոյն նպատակներով հրաւիրվում է տեղական հայկական կլուբը:

Պէտք է ասել, որ այդ օրը միևնոյն ժամանակ կլուբի այս տարվայ սեզօնի բացման օրն էր:

Այդտեղ էին և մեր հասարակութեան ինտելիգենցիայից բժ. Ա. Բուդաղեանը, Ադոնցը, պրօֆ. Վարդանեանը և այլք:

Այստեղի զեկուցումը զրոյցի բնաւորութիւն ստացաւ:

Ալ. Բալանթարը հարեւանցօրէն պատմական մի ակնարկ ձգեց Կովկասի հայկական կուլտուրական գործունէութեան անցեալի և ներկայի մասին ու կանգ առաւ այն հանգամանքի վրա, որ այժմ, երբ եկեղեցական կալուածքները վերադարձված են, հայ-թուրքական ընդհարումները դադարած և յեղափոխական փոթորիկները վերջացած, «մեզ մնում է կատարել խաղաղ կուլ-

---

պատմէջներով...

Կնոջ ներկայ դիւրաբեկ քնքշութիւնն ու միամտութիւնը (վերջինս անմեղութիւն էլ է կոչվում) համարելով չափազանց դրական հոգեկան յատկութիւններ, հասարակական միջին կարծիքը ճգնում է անաղարտ պահպանել նրանց, խուչընդոտ հանդիսանալով այդ յատկութիւնների այլ բովանդակութեան: Եթէ հարցի վրա նայենք այդ տեսակէտից, միթէ միևնոյն հոգեկան յատկութիւնների աւելի մաքուր տիպարը չէ ներկայացնում մանկան հոգին. և սակայն միթէ մենք կը համաձայնվենք կանգնեցնել նրա զարգացումը սոսկ այն պատճառով, որ այդ «թանգագին» յատկութիւններից նրան չը զրկենք:

Զարգացման պրօցէսը անխուսափելի կերպով առաւել մեծ թափով առաջ կը գնայ և կնոջ ներկայ միջին տիպը կը դառնայ ինքնուրոյն միմիայն այն դէպքում, երբ կինը տնտեսական-պրօֆեսսիոնալ կեանքում ինքնուրոյն և անկախ կը լինի: Համենայն դէպս այդ պրօցէսը պէտք է կատարվի ոչ թէ անկախ և դէպի տղամարդը թշնամական վերաբերմունք պահպանելով, այլ փոխադարձ երկուստեք ստեղծագործութեամբ՝ բացառապէս շահագործման ենթակայ և կապիտալի լուծը թօթափելու գիտակցութեամբ գործող սօցիալ-ռամկավարների դաւանանքներով: Ըստ որում սեռերի հասարակական յարաբերութիւնների մէջ տեղի պիտի ունենայ օրգանական մերձեցում: Այսպէս տղամարդու և կնոջ առանձնացված տիպերը, որ դժուար է երևակայել ներկայ ռէալ կեանքում, կը լինէին մի կողմից՝ վայրենի, միւս կողմից՝ հեշտասէր: Մերձեցումը փոխադարձօրէն կրթելու է միմեանց. եսասէր և կոպիտ տղամարդը կնոջից պիտի փոխ առնէ մարդկային քնքշութեան և նրբութեան անհրաժեշտ գծեր, իսկ կինը տղամարդուց՝ նրա մտաւոր պաշարն ու փորձառութիւնը:

Եւ ձուլված Ակ (այր և կին) այն ժամանակ կը տան մարդու այն պսիխօ-ֆիզիօլօգիական բարձրարժէք տիպը, որի մասին ներկայ մարդկութիւնը միմիայն կերազէ, իսկ ապագայինը՝ ականատես կը լինի...

Մայրականութիւնը, որ մարդկային այլ յատկութիւնների հետ կնոջ բնական կոչումն է, մտաւոր բարդ շրջապատման մէջ իսկ բնականօրէն կը պահպանի այն բոլոր օրգանական պաշարն ու հողը, որոնք անհրաժեշտ կը լինեն նրա յատուկ բնութեան անվեհ ու զարգանալուն:

Վերջացնելով մեր նախաբանը, անհրաժեշտ ենք համարում շեշտել մի հանգամանք ևս:

Հասարակական պատմական-կուլտուրական կեանքի անհրաժեշտ ֆակտօրներից մէկն է կանանց սօցիալական կացութիւնը. որքան ծանր ու անտանելի է կնոջ անհատական դրութիւնը որեւէ երկրում, որ չափով նա գտնվում է ստրկացման մէջ, այն չափով նոյն հասարակութեան կուլտուրական պատկերը խղճուկ է ու ողորմելի: Ուսանելի են պատմական հակադիր դրութիւնները Արեւմտեան Եւրոպայում և ասիական երկիրներում. առաջինի կուլտուրական կեանքի բարձրութեան հետ՝ զուգընթաց է կնոջ համեմատական ազատ ու բարեկիրթ կացութիւնը. այդ հիման վրա՝ ասիական կնոջ ճնշված, ստրկական վիճակը կատարեալ ցուցաչափն է իր միջնադարի ընդհանուր խաւարամտութեան ու յետամնացութեան...

Սուլխաթեան

(Կը շարունակվի)

տուրական աշխատանք, որ անհրաժեշտ է գնալ դէպի գիւղերը, օգնել մեր քայքայված գիւղացիութեան ամեն կերպ և միջոցներով, որպէսզի նա վաղը և միւս օրը ինքը լինի իր գործունէութեան տէրն ու տնօրէնը, որ ինքը կարողանայ գիտակցօրէն վերաբերվել իր վարուցանքին, զարգացնել իր գիւղատնտեսական գործերը. Եւ այն ժամանակ միայն,—շեշտեց նա,—երբ գիւղացին ոտքի կը կանգնի, այնինչ երբ նա կը հրաժարվի այսօրվայ նահապետական արդիւնաբերութեան եղանակներից, երբ եւրոպական կուլտուրան կը պատուաստվի նրա մէջ, մենք իրաւունք կը ստանանք պարծենալու մեր ոյժի մեծութեամբ։ Իսկ դրա համար անհրաժեշտ է, որ մեզանից իւրաքանչիւրը աշխատի եւ աջակցի այն նորաբողբոջ կուլտուրական ծիլերին, որ այսօր նկատում ենք այնտեղ»։

Կլուբի անդամներն էլ նոյնպէս ծանօթացան Հ. Գիւղատնտ. և Տնայնագործ. Ընկերութեան պատրաստած կտաւների նմուշների հետ, որոնք շատերին հիացմունքի և զարմանքի պատճառ դարձան։

Սրանից յետոյ, ի պատիւ Ալ. Քալանթարի, կլուբի անդամները տուին ընթրիք։

Վաղը, ամսիս 27-ին, Ալ. Քալանթարը մեկնում է Կովկաս։ Մ. Ազեան

ԻՍ. ԹԱԴԷՈՍԵԱՆԻ ԹԱՂՈՒՄԸ

Շուշի, 1 հոկտեմբերի

Սեպտ. 30-ին հողին յանձնվեց Շուշու պատուաւոր քաղաքացի Իսահակ Թադէոսեանի մարմինը։

Սեպտ. 29-ին քաղաքիս ժողովուրդը իր հոգևորական դասով, համքարութեան դրօշակների և նրանց ներկայացուցիչների խուռն բազմութեամբ՝ հայերի ներքին հանգստարանում ընդունեց Թադէոսեանցի դիակը շքեղ դագաղում։ Տխուր հանդէսը համեստ կարգապահութեամբ հասաւ նրա սեփական տունը, որտեղ այժմ պօստհեռագրատունն է, հոգեհանգիստ կատարեց. ապա դիակը տարան ս. Յովհաննու Մկրտչի եկեղեցին, որի ծխական էր հանգուցեալը, և դագաղը իջեցրին նրա նոյն եկեղեցու բակում կառուցած դպրոցի դահլիճը։

Միւս օրը, սեպտ. 30-ին, ժամը 9-ից սկսեց այդ եկեղեցին ժողովվել քաղաքի երկսեռ հասարակութիւնը. եկան քաղաքի պրիստաւը, քաղաքապահները՝ հսկելու կարգապահութեանը. եկեղեցու դուռը փակվեց հասարակութեան առաջ, որովհետև փոքր լինելու պատճառով չէր կարող ընդունել այնքան բազմութիւն, և հաստատութիւնների կողմից եկող ներկայացուցիչները կը մնային դուրսը։

Ժամը 10-ից եկան քաղաքագլուխը, քաղաքային վարչութեան ձայնաւորները, Թուրքաց հոգևորականութիւնը՝ ղազիի առաջնորդութիւնով, ռէալական, քաղ., թեմ. դպրոցների տեսուչները, ռուսաց քահանան իր երգեցիկ խմբով և քաղաքի պատուաւոր հասարակութիւնը և համքարները իրանց դրօշակներով։ Եկեղեցին լցվեց խուռն բազմութիւնով. տեղ չը լինելու պատճառով, մնացած ժողովուրդը կանգնեց եկեղեցու հարաւային և հիւսիսային բակում։

Ժամը 11-ի մօտերքում հանգուցեալի դիակը փոխադրվեց եկեղեցի և սկսվեց պատարագը։ Պատարագիչն էր Եղիշէ վարդապետը. երգում էր թեմական դպրոցի քառաձայն խումբը։ Թաղման հանդիսին մասնակցում էին քաղաքի և շրջակայքի հոգևորականներ, թւով 21 քահանաներ, և քաղաքիս կոյսերի միաբանութիւնը։ Պատարագը վերջանալուց յետոյ հանգուցեալի դիակը փոխադրեցին եկեղեցու հիւսիսային բակը, որտեղ պատրաստված էր նրա յաւիտենական գերեզմանը։ Երբ դագաղը իջեցրին գերեզմանը, Եղիշէ վարդապետը կարդաց Վեհափառ Հայրապետի հեռագիրը, որով Նրան իր ներկայացուցիչն էր կարգում ներկայ լինելու թաղմանը և մխիթարելու հանգուցեալի ժառանգներին։ Ապա մխիթարեց սգաւորներին, բաղդաւոր համարեց նրանց, որ արժանանում են ծայրագոյն Պետի այդ ուշադրութեանը, և համառօտակի, բնաբան առնելով Աւետարանի այս խօսքերը թէ՝ «եթէ ցորենի հատիկը չը մեռնի, չէ կարող պտուղներ տալ», դրուատեց Թադէոսեանի արժանաւորութիւնները որպէս պատուաւոր քաղաքացու և կարդաց հանգուցեալի կենդանութեան ժամանակ արած բարեգործութիւնները այսպէս. 1) կառուցել է ս. Յովհաննու Մկրտչի եկեղեցու բակում դպրոցի շէնք և 5 տարի իր միջոցներով պահել նրա գոյութիւնը, 2) նուիրել է այդ դպրոցին 30,000 ր., մշտապէս ապահովելու նրա գոյութիւնը, 3) Շուշու ռէալական դպրոցի զուգընթաց դասարանները պահելու համար տուել է 11,000 ր., 4) թեմ. դպրոցում պահել է 50 թոշակաւորներ, 5) նոյն դպրոցին տուել է նուէրներ՝ որքանութիւնն անյայտ, 6) էջմիածնի ճեմարանում պահել է որդեգիրներ, 7) 1879 և 1880 թ.թ. թանգութեան ժամանակ նուիրել է աղքատներին 4000 ր., 8) 1907 թ. սովեալներին տուել է 3,000 ր., 9) Թուրք-հայկական ընդհարումներից վնասվածներին օգնել է անյայտ քանակութիւնով, 10) գիւղերին բաժանել է դրամ, ցորեն և ալիւր անյայտ քանակութիւնով, 11) քաղաքի շրջակայքում շինել է մի քանի աղբիւրներ։

Նրա ժառանգները իրանց բազմերախտ հօր յիշատակը յաւերժացնելու համար արել են հետևեալ նուիրատուութիւնները.

1) Վեհափառ Հայրապետի տրամադրութեան տակ են դնում կրթական նպատակների համար 5000 ր., 2) Շուշու թեմ. դպրոցում նրա անունով որդեգիրներ պահելու համար 2000 ր., 3) նոյն դպրոցի կարիքների համար 500 ր., 4) Մարիամեան օրիորդաց դպրոցին 500 ր., 5) Ագուլեաց եկեղեցու ծխ. դպրոցին 500 ր., 6) Ղազանչեցոց եկեղեցու ծխ. դպրոցին 500 ր., 7) Մեղրեցոց եկեղեցու ծխ. դպրոցին 500 ր., 8) Յովհաննու Մկրտչի եկեղեցուն 500 ր., 9) նոյն եկեղեցու Թադէոսեան դպրոցի կարիքների համար 500 ր., 10) Շուշու կուսանաց վանքին 500 ր., 11) Բագուի Հ. Կուլտ. Միութեան արհեստագիտական դպրոցի համար 1000 ր., 12) Շուշու որբանոցին 500 ր., 13) Ջուլհականոցին 200 ր., 14) ռուսաց եկեղեցուն 500 ր., 15) Թուրքական մզկիթին 500 ր., 16) Թուրքական ուսումնարանին 500 ր., 17) ռէալական դպրոցի չքաւորների ուսման վճար 300 ր., 18) Կ. Հ. Բ. Ընկ. Շուշու ճիւղին նոր գրքեր բերել տալու 300 ր., 19) ռուսաց Մարիամեան օրիորդ. դպրոցին 300 ր., 20) Նոր-շէնի գիւղական հիւանդանոցին 400 ր., 21) Շուշու քահանայական միութեան գանձարանին 500 ր., 22) Քաղաքային դպրոցի չքաւոր աշակերտներին 300 ր., 23) Ներքին-Թաղավարդի ծխական դպրոցին 200 ր.։

Եղիշէ վարդապետի ընթերցումից յետոյ ռուս քահանան կատարեց հոգեհանգիստ, որից յետոյ աղօթք կարդաց և Թուրքերի մօլլան և ապա խօսեց հանգուցեալի մասին դրուատելով նրա արժանաւորութիւնները։ Խօսեց սրտառուչ խօսքերով և Թադէոսեան դպրոցի մի փոքրիկ աշակերտ՝ թւելով իրանց բարերարի վսեմ գործը. Նրանից յետոյ խօսեց նոյն դպրոցի ուսուցիչ Արամ Տէր-Իսրայէլեանցը, թւելով թէ ինչ է մարդկային կեանքը այս աշխարհում, ինչպէս պիտի ընթանան մարդիկ և ինչպիսի վախճան ստանան. ուսուցիչն ապա թւեց հանգուցեալի մեծագործութիւնը, որ բարեբար հանդիսացաւ փողոցային ապականիչ մթնոլորտից ազատելու հարիւրաւոր աղքատ և չքաւոր ընտանիքների զաւակներ, տալով նրանց պատշաճ կրթութիւն և դաստիարակութիւն։ Քաղաքի արհեստաւորների համքարութեան կողմից խօսեց Մեղրեցոց եկեղեցու երէցփոխ և դպրոցի հոգաբարձու Արշակ Մանգասարեանցը։ Սրա ճառը անպաճոյճ էր, պարզ, հասկանալի, իսկ արհեստաւորների սրտի խորքից բղխած արտայայտութիւն։ Սա նկարագրում էր, թէ ինչպէս հանգուցեալ Սհակ-ապէրը օգնում և խրախուսում էր արհեստաւոր դասակարգին. վերջում նա զգացված շեշտեց. «Ճանապարհդ բարի, մեզանից յարգված ու սիրված Սհակ-ապէր», որին ձայնակցեց խուռն արհեստաւորների դասակարգը։

Ճառախօսութիւններից յետոյ, վարդապետը կարդաց վերջին աղօթքը և դագաղը փակվեց յաւիտեան։ Դագաղի վրա դրված էին 7 պսակներ, բայց աւելորդ. նրա անթառամ և անմոռանալի պսակներն են նրա արած բարեգործութիւնները, Թադէոսեան դպրոցը իր հարիւրաւոր աղքատ աշակերտներով։ Նրա յաւիտենական անջինջ պսակները դրանք են։ Գ. Ք.

ՄԻ ԿՈՐՈՒՍՏ

Ախալցխա, 1 հոկտեմբերի

Այսօր տեղի ունեցաւ կարճ հիւանդութիւնից յետոյ վախճանված Աւ. Ասլանեանի թաղումը։ Հանգուցեալը երկար տարիների ընթացքում ջերմ մասնակցութիւն է ունեցել հասարակական բնաւորութիւն ունեցող գործերում և աչքի էր ընկնում մանաւանդ իր համեստ բնաւորութեամբ։ Վերջին տարիներս թէև ծերացած, բայց չէր դադարած կրկին եռանդոտ մասնակցութիւն ունենալուց հասարակական հարցերում։ Իր առաջարկութեամբ էր՝ որ Կ. Հ. Բ. Ընկ. տեղիս ճիւղը ունեցաւ աղքատախնամ մասնախումբ, որի քարտուղարութեան պաշտօնն էլ մինչև հիւանդանալը տանում էր հանգուցեալը։ Երկար տարիների ընթացքում, մանաւանդ Գրիգոր Արծրունու կենդանութեան ժամանակ, «Մշակում» հրատարակած իր թղթակցութիւններով «Ազնիւ» կեղծանուան տակ՝ համարեա միակն է եղած Ախալցխայի կեանքը արտացոլացնողը. վերջերս էլ նոյնպէս յաճախ գրում էր իր սեփական ստորագրութեամբ «Մշակում» շօշափելով զանազան տեղական հարցեր։ Կ. Հ. Բ. Ընկ. տեղիս ճիւղի վարչութիւնը կամենալով յարգել հանգուցեալի յիշատակը՝ 20 րուբլու դասագրքեր յատկացրեց, որոնք պիտի բաժանվեն Եղիսաբեթեան օր. դպրոցի չքաւոր աշակերտուհիներին։ Ախալցխայի նման թմրած հասարակութեան համար Աւ. Ասլանեանի կորուստը զգալի է։ Արծիւկ

ՍՊԱՆՈՒԹԻՒՆ ԵԱՍՆՕԳՈՐՍԿԻ ՎԱՆՔՈՒՄ

Անցեալ տարի Զավօդի գիւղի գետակում, Չէնստոխովից 25 վերստ հեռաւորութեամբ, գտնվեց մի անծանօթ մարդու դիակ բանի մահվան նշաններով, որը կարված էր դիվանի մէջ։ Ո՞վ էր սպանվածը և ովքեր էին մարդասպանները, այն ժամանակ չը կարողացան իմանալ։ Սակայն մի բան հաստատվեց, որ դիակը դիվանով ուղարկված էր Չէնստոխովից, մի քանի օր դրված էր Կլոմնիցա կայարանում և ապա անծանօթ մարդիկ ստացել և տարել են ձիերով։ Եւ միայն պատահմամբ բացվեց այդ յանցանքի թելը։

Գինետներից մէկում,—պատմում են Վարշավայի լրագիրները,—գաղտնի ոստիկանութեան գործակալը պատահմամբ լսեց արբած կառապանների խօսակցութիւնը, որոնցից մէկը ի միջի այլոց ասաց. «Ես ինքս ոչինչ չը գիտեմ դիվանի մէջ գտնվող դիակի մասին, բայց մեր մէջ կան այնպիսինները, որոնք կարող կը լինէին շատ հետաքրքրական բաներ պատմել այդ գործի մասին»։ Կառապանը կալանաւորվեց, և դրանից յետոյ ձերբակալվեցին էլի երկու կառապաններ։ Բացի դրանից քննիչ իշխանութիւնները, քննելով այն խսիրները, որոնց մէջ կարված էր դիվանը, գտան դրանց մէջ Պոտոկի խանութի կնիքները Չէնստոխովում։ Պոտոկը ցոյց տուեց, որ այդ խսիրները ինքը ծախել է Եասնօգորսկի վանքին։ Թելը գտնված էր։ Ապա իմացվեց, որ դիվանը կաթոլիկ վանքի աբեղայ Դամացի Մացօխի սեփականութիւնն էր։ Վերջինս, իմանալով, ըստ երևոյթին, որ իշխանութիւնները գտան յանցանքի հետքերը, արտասահմանեան անցագիր վերցրեց և փախաւ վանքից իր Զալոգա անունով ծառայի հետ միասին։ Ճանապարհին Դամացի Մացօխը մտաւ Վարշավա, որտեղից տարաւ իր հետ իր հօրեղբօր որդի Վացլավի 26 տարեկան կնոջը՝ Ելենա Մացօխին, որի ամուսինը պսակադրութիւնից յետոյ շուտով անհետ կորաւ։ Բանից դուրս եկաւ, որ սպանվածը հէնց Վացլավ Մացօխն է։

Ներկայումս յանցանքի պատկերը բացված է։ Կալանաւորված կառապանների պատմելով, յուլիսի լոյս 24-ի գիշերը նրանց մօտ եկաւ Եասնօգորսկի վանքի մօնթէ և հրամայեց նրանց գիշերը գալ վանքի դռների մօտ։ Երբ երկու կառապաններն եկան, մի քանի աբեղաներ վանքից դուրս բերին խսիրի մէջ փաթաթված մի մեծ հակ և դրեցին կառքերից մէկի մէջ։ Կառապանին յայտնեցին, որ հակի մէջ արգելված գրքեր են։ Միւս կառքի մէջ նստեցին աբեղան և նրա մօնթէը, որոնք ապա արձակելով մի կառապանին՝ նստեցին այն կառքը, որի մէջ հակն էր դրված։ Ուշ գիշերով կառքը Զավօդի գիւղի շրջականերումն էր, մի մեծ լճակի ափին, ուր և գցեցին «արգելված գրքերով» հակը։ Երբ հակը խորասուզվեց ջրի մէջ, աբեղան,—պատմում է «Кіевскія Вѣсти» լրագիրը,—կանչեց իր մօտ կառապանին և մօնթէին, փարաջայի տակից հանեց խաչը և բարձրացնելով իր ուղեկիցների գլուխների վրա՝ ասաց. «Երդվեցէք յանուն Աստուածամօր հրաշագործ պատկերի, որ երբէք և ոչ ոքի չէք ասի այն, ինչ այստեղ պատահեց»։ Երդումը տրվեց։

Որպէս հաղորդում է «Варш. Курьеръ», լրագիրը, Դամացի Մացօխը վանքի եկեղեցում իր ժամանակ աղմուկ հանած սրբապղծութեան մասնակցողներից մէկն էր։ Դամացի Մացօխը միջնորդի դեր էր կատարել տալիս Վացլավ Մացօխին չէնստոխովեան պատկերից գողացած թանգագին քարերը վաճառելու գործում։ Դամացիի խցում գտան կեղծ մարգարիտներ։ Կարծում են, որ յանցաւորը իսկական քարերի տեղ դնում էր կեղծ քարեր։ Աբեղաներից մէկը, որպէս ասում են, մի անգամ նկատեց այդ արարքը։ Այն ժամանակ, յանցանքը ծածկելու համար սրբապղծութեան ձև տուին։ Լուրերի համեմատ, սպանութիւնը կատարվել է ազատվելու համար Վացլավ Մացօխից, որպէս սրբապղծութեան վտանգաւոր գործակցի։

Լեհական լրագիրների խօսքով, Դամացի Մացօխը ձերբակալված է Աւստրիայում և խոստովանեց, որ ինքն է կատարել սպանութիւնը։ Հռոմի պապը չէնստոխովեան վանքն ուղարկեց հեռագիր, որով բանադրանքի է ենթարկում Դամացի Մացօխին։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Երէկ, հոկտ. 5-ին, Նորին Կայսերական Մեծութիւն Գահաժառանգ Արքայորդի և Մեծ Իշխան Ալէքսէյ Նիկոլայեվիչի անուանակոչութեան օրը, Ալէքսանդրո-Նևսկիի անուան զինուորական տաճարում Վրաստանի էկզարխը պատարագից յետոյ կատարեց գոհաբանական մաղթանք, որի ժամանակ Արսէնալի սարից պարպվեցին 21 թնդանօթ։ Պատարագին և մաղթանքին ներկայ էին Կովկասի Փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրօնցով-Դաշկով, Փոխարքայի երկու օգնականները, շքախումբը, քաղաքացիական և զինուորական նահանգապետները, բոլոր զօրամասերի ներկայացուցիչները, քաղաքացիական հաստատութիւնների ներկայացուցիչները և մեծ բազմութիւն։ Մաղթանքից յետոյ տեղի ունեցաւ զօրահանդէս Փոխարքայի ներկայութեամբ։ Մաղթանքներ կատարվեցին այդ օրը նաև բոլոր միւս ազգութիւնների եկեղեցիներում և աղօթատներում։ Քաղաքը զարդարված էր դրօշակներով և պարապմունքներ չը կային։

◆ Հոկտ. 9-ին կովկասագիտական բարձր դասընթացքներում պրոֆ. Խարչիկովը կը դասախօսէ Կովկասի նաւթային հարստութիւնների մասին։

◆ Հոկտ. 2-ին կայացաւ Թիֆլիսի քաղ. դումայի ջերմուկախօսական փոխ-մասնաժողովի նիստը Թիֆլիսում ջերմուկախօսական կայարան հիմնելու նախագիծը և նախահաշիւը քննելու համար։ Այս ձեռնարկութիւնը իրագործելու համար նախահաշւով պահանջվում է մօտ 3 միլիոն րուբլի և 10 դեսեատին հողաբաժին։

◆ Կովկասի Փոխարքայի ներկայացուցիչ սենատոր Նիկոլսկին հանքային ջրերից վերադարձել է Պետերբուրգ։

◆ Ռուսաց դրամատիկական խմբի ղեկավար Նիկուլինը էժան տոմսակներ է տուել Արտիստական Ընկերութեան թատրոնի ներկայացումների համար նաև տեղական զօրամասերի օֆիցերներին։

◆ Այսօր մի յատուկ մասնաժողով նահանգապետի մասնակցութեամբ նորից կը դիտէ նորակառոյց ցիրկի փայտէ շինութիւնը։

◆ «Մշակի» երէկվայ համարի ներքին լուրերի բաժնում սպրդել է հետևեալ սխալը. Զգրաշէնի ս. Աւետեաց եկեղեցու ծխական ընդհանուր ժողովում վերաստուգիչ յանձնաժողովի անդամ է ընտրվել ոչ թէ բժ. Մաղաքեանը, այլ նրա եղբայր վաճառական Մ. Մաղաքեանը։

◆ Հոկտ. 20-ին Պետերբուրգում յատուկ մի մասնաժողով ձեռնարկելու է քննելու Կովկասի մարգանեց-արդիւնաբերողների կարիքները և դրութիւնը։ Խորհրդակցութեանը մասնակցելու են Կովկասի Փոխարքայի, կովկասեան հանքային վարչութեան, Շօրապանի մարգանց արդիւնաբերողների համագումարի, Փոթիի բօրսային կոմիտէի ներկայացուցիչները։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Հոկտեմբերի 3-ին, 4-րդ քաղաքամասի պրիստաւը սանիտարական բժիշկ Ղալամքարեանի և ֆելդշէր Րիժենկօյի հետ սանիտարական քննութիւն կատարեց իր քաղաքամասի մի քանի խանութպանների մօտ, ըստ որում Մուխրանսկայա փողոցում Թիֆլիսեցի Մինա Պարոն-Սարգսեանի խանութում երևան հանվեց 15 պուդ կովի կեղծ իւղ. խանութը, իբրև հակառողջապահական պայմաններում գտնվող, կնքվեց, իսկ տէրը ենթարկվում է պատասխանատուութեան։

◆ Հոկտեմբերի 4-ի առ. ժամը 9-ին Փոթիյսկայա փող. № 13 տանը Գիմօվկայի բնակարանում յանկարծամահ եղաւ Սամարայի նահ. բնակիչ Եւգենիյ Լազուտկինան, 37 տարեկան։

◆ Լոյս հոկտեմբերի 5-ի գիշերը ոստիկանութեան պաշտօնեաները ս. Կարապետի ձորում ձերբակալեցին աքսորական Արշակ Կարապետեանին, որ պատասխանատուութեան է ենթարկվում քր. պատժագրքի 63-րդ յօդուածի մեղադրանքով։

◆ Հոկտեմբերի 3-ին Բիւրդուչնի նրբափողոցում սպանված երիտասարդը եղել է պարսկահպատակ Ասատուր Բաբխուդաբեանը, որ ապրում էր Շինդիսի նրբանցքում № 10 տանը։

◆ Հոկտեմբերի 4-ին, ոստիկանական պաշտօնեաները շուրջկալի ժամանակ ձերբակալեցին VIII քաղաքամասում՝ 17, VII-ում՝ 20, III-ում՝ 20 անգործ և անանցաթուղթ մարդկանց։

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

◆ Բ. Դօլուխանեանի թաղմանը Կաթողիկոսի ներկայացուցիչ Անանիա արքեպիսկոպոսը, «Баку» լրագրի ասելով, անցեալ շաբաթ դիտել է բոլոր իրան ենթակայ հաստատութիւնները, ներկայ է եղել հայ դպրոցների դասերին, մի քանի խորհրդակցութիւններ է կազմել քահանաների հետ՝ ծխականներին հաւասարապէս իրար մէջ բաժանելու մասին։ Շուտով սրբազանը շրջելու է իր թեմը։

◆ Օգտվելով Բագւում գտնվելուց, նորերս եպիսկոպոս ձեռնադրված՝ Երուսաղէմի պատրիարքական տեղապահ Դանիէլը սրբազանը այցելել է ծխական դպրոցները, Մարդասիրական Ընկերութիւնը և այլն։ Այս օրերս սրբազանը կը մեկնէ Օդեսսայի վրայով Երուսաղէմ։

◆ Ամերիկացիները հաշւել են, որ գազային լուսաւորութիւնը անհամեմատ էժան է նստում էլեկտրականից և նաւթից, որի առիթով նրանք բանակցութիւններ են վարում Բագւի ֆիրմաներից մի քանիսի հետ Սուրախանիի գազի մասին։

◆ Հանգուցեալ Դօլուխանեանի յիշատակը յաւերժացնելու համար Զաւէն վարդապետի նախագահութեամբ գործում է մի մասնաժողով, բաղկացած հետևեալ անձերից. Դ. Աւան-Իւզբաշեան, Մ. Աւագեան, Ս. Այվազեան, Գ. Գանջեցեան, Մ. Պապաջանեան, Ս. Թաղիանոսեան և Գ. Տէր-Միքայէլեան։ Քաղաքապետը թոյլատրել է մասնաժողովին սկսել հանգանակութիւն։

◆ Բրիւսէլի ընկերութիւններից մէկը Բագւի քաղաքային վարչութեանը առաջարկել է իր պատրաստակամութիւնը՝ կառուցանելու էլեկտրաքարշ Բագու քաղաքում։ Այս առաջարկութեանը վարչութիւնը տալիս է լուրջ ուշադրութիւն։

◆ Խուզարկու ոստիկանութիւնը սեպտեմբերի 30-ին, Թիֆլիսի Նաւթարդիւնաբերական Ընկերութեան Բիբի-Էյբաթի տնակում գտաւ 448 ռումբի կաղապարներ, 160 սնդիկի գլուխներ և 14 զանազան մեծութեան բիկֆօրտի թել։ Բացի դրանից յիշեալ պահեստի գործակատարի մօտ գտնվեցին 120 ապակեայ ձողեր ռումբերի համար։ Գործակատար Ազամալ Ազամալեանը կալանաւորված է և ասաց, որ այդ իրերը նրան տուել է պահելու Տիմօֆէյ Զօտովը, որ գտնվում էր կենտրօնական բանտում։ Քննութիւնը յանձնված է քննիչ իշխանութեան։

◆ Այս օրերս Բագուի վրայով Գանձակի բանտից Նովօչերկասկ տարվեց էտապով Բագւում յայտնի բժիշկ Լեոն Աթաբէգեանը, որ երկու տարի առաջ ձերբակալվեց և ամբողջ ժամանակ պահվեց Գանձակի նահանգական բանտում։ Բժ. Աթաբէգեանը, ինչպէս յայտնի է, մեղադրվում է «Դաշնակցութիւն» կուսակցութեանը պատկանելու մէջ և ուղարկվեց Նովօչերկասկ Լըժինի պահանջով։ Էտապը Բագւում շատ քիչ մնաց։

◆ Սեպտեմբերի 30-ին, երեկ. ժամը 8-ին, «Մազուտ» ընկերութեանը պատկանող «Դէր-Վէխտէր» նաւակը նաւահանգստից ոչ հեռու ջրասոյզ եղաւ, որի ժամանակ նաւակում նստած տասն նաւաստիները խեղդվեցին։

◆ Սեպտ. 30-ին, Ան. Քալանթարի նախագահութեամբ, կայացաւ հայկական դրամատիկական սեկցիայի կազմակերպիչ նիստը։ Սեկցիան վճռեց նորից ձեռնարկել հայկական ներկայացումներ Սև քաղաքի ժողովրդական տան մէջ. ներկայացումներ կը տրվեն նաև Մարդասիրական Ընկերութեան դահլիճում։ Խորհրդակցութիւնը որոշեց հրաւիրել հմուտ ռէժիսեօրի, որպիսին մատնանշվեց Միք. Մանուէլեան։ Կազմակերպիչ բիւրոյի անդամներ ընտրվեցին Սաֆարեան, Այվազեան, Արիստակեան, բժ. Սաղեան և Ս. Զիժով։ («Б.»)

ՄԱՄՈՒԼ

Յաճախ լսվում է թէ հայի և թէ վրացու բերանից, թէ մենք իրար չենք ճանաչում, ծանօթ չենք իրար գրականութեանը, մամուլին, կեանքին։

Առաւելապէս այդ կողմից անծանօթ են հայ կեանքին մեր հարևան վրացիները, քանի որ նրանց մէջ համարեա թէ չի գտնվի մէկը, որ գէթ մասամբ տիրապետէր հայոց լեզուին ու դրա շնորհիւ օ-կուրան լինէր հայ կեանքին։

Վերջերս սակայն նկատվում է, որ վրացիներն էլ սկսել են աւելի հետաքրքրվել մեր կեանքով։

Դրան իբր ապացոյց կարող է ծառայել գէթ մի որոշ չափով այն, որ Թիֆլիսում հրատարակվող վրաց թերթերից «Սախալխո Գազեթին» իր էջերում վերջերս տեղ է տալիս տեղական հայ մամուլի վերաբերմամբ գրված մի շարք յօդուածների, որոնցով աշխատում է վրաց ընթերցող հասարակութեանը ծանօթացնել հայ մամուլի էութեան հետ։

Այդ թերթը իր վերջին համարներից մէկում զետեղել է մի երկար յօդուած, ուր խօսում է տեղումս հրատարակվող հայ թերթերի և ի միջի այլոց «Մշակի» մասին, որից առաջ ենք բերում մեզ վերաբերող մասերը միայն։

«Հայերէն հնագոյն լրագիրը «Մշակն» է, որ արդէն 38 տարի է՝ ինչ հրատարակվում է»,—ասում է թերթը։

«Նրա ուղղութիւնը ազատամիտ-դեմօկրատիական է և մօտենում է կադէտների ծրագրին, թէև այս լրագրին աշխատակցում են ձախակողմեան մտածելակերպի գրողներ ևս։

«Այս հանգամանքի պատճառն այն է, որ «Մշակը» տարածված և շատ հետաքրքրական թերթ է։

«Բացի այդ՝ Թիֆլիսում չը կայ «Մշակից» աւելի ազատախոհ հայերէն օրգան։

«Մշակի» խմբագրութիւնը չափազանց սիրալիր է և մեծ ուրախութեամբ տեղ է տալիս իր էջերում նոյնիսկ աւելի ձախ ուղղութեան պատկանող գրողներին, որոնց մտքերի հետ գուցէ և նա համամիտ չէ։

«Այս տեսակէտից «Մշակը» հայ լրագրութեան մէջ եզակին է։

«Մշակի» հիմնադիրն է հանգուցեալ տաղանդաւոր հրապարակախօս Գրիգոր Արծրունին, որի վարդապետութեան դպրոցից ծնվեց հայ ինտելիգենցիայի մեծ մասը և որը թէ անցեալում և թէ ներկայումս մեծ ազդեցութիւն ունի հայերի հասարակական մտքի վրա։

«Հոկտեմբերի 17-ի մանիֆեստից յետոյ, երբ տեղի ունեցաւ հասարակութեան մէջ դասակարգային շերտաւորում, «Մշակի» խմբագրութիւնից շատերը հեռացան, ոմանք դէպի աջ գնացին, իսկ ոմանք էլ դէպի ձախ, որոնցից իւրաքանչիւրն ունեցաւ իր մտքերի թարգման թերթը։

«Բայց օրպակաս դուրս եկաւ մամուլի ազատութիւնը, և այժմս, երբ նա գտնվում է վատ դրութեան մէջ, ազատախոհ հայ գրողները նորից «Մշակի» խմբագրութեան մէջ գտան տեղ. իսկ սրտաբաց խմբագրութիւնն էլ իր աւանդական սիրալիրութեամբ վերաբերվեց այդ գրողներին։

«Վերջին 16 տարվայ ընթացքում «Մշակի» խմբագիրն է յայտնի գիւղատնտես, հրապարակախօս և հասարակական գործիչ Ալ. Քալանթարը։

«Թերթն ունի բազմաթիւ աշխատակիցներ, որոնցից մի քանիսի անունը կը տանք։

«Մշակի» հրատարակիչներից մէկն է տաղանդաւոր և հին աշխատակից, յայտնի գործիչ (հայերէն ամսագիր «Արօրի» խմբագիր) և հրապարակախօս Հ. Առաքելեանը, որը լաւ ծանօթ է ոչ միայն մեր երկրում, այլ և Ռուսաստանում ու արտասահմանում։ Ի միջի այլոց, նա միակ հայն էր, որ մասնակցեց Ստոկհոլմի Համաշխարհային Խաղաղութեան վերջին համագումարին։

«Հ. Առաքելեանը յայտնի է նոյնպէս իր

գրական-վիպասանական գրուածքներով, որոնցից շատերը թարգմանված են ռուսերէն լեզուով։

«Երկրորդ հնագոյն աշխատակիցն է Յով. Տէր-Մարկոսեանը, որը միաժամանակ այս թերթի հրատարակիչներից մէկն է և որը անդադար աշխատում է, սկսեալ «Մշակի» համարեա լոյս տեսնելու օրից։ Յ. Տէր-Մարկոսեանը Գ. Արծրունու հոգով դաստիարակված մշակներից մէկն է և նրա կենդանութեան օրով, սա նրա աջ թեւն էր»։

Ապա յօդուածագիրը թւում է մեր թերթի աշխատակիցներից մի քանիսի անունները ևս, տալով նմանապէս քանի մի այլ տեղեկութիւններ։ Վերջում թերթը ասում է, որ 1912 թւին լրանում է «Մշակի» գոյութեան 40-ամեակը, երբ մտադրութիւն կայ շքեղօրէն տօնել յոբելեանը։

ԳԻՏՈՒԹ.. ԳՐԱԿԱՆ.. ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Սեւաստոպոլ, 23 սեպտեմբերի

Ամսիս 19-ին տեղիս հայոց ուսումնարանի սրահում, յօգուտ ուսումնարանի, նախաձեռնութեամբ աւ.-ուսուցիչ Խ. Տէր-Ենոքեանի, տեղի ունեցաւ հայ թատերասէրների ներկայ սեզոնի անդրանիկ հայերէն ներկայացումը։ Խաղացին Սունդուկեանի «Էլի մէկ զոհ» կոմեդիան և Աւետեանի «Պաշտօնս է խամփալ»։

Ներկայացմանը մասնակցում էին մեզանում հիւր եկած Սեվաստոպոլի հայոց ուսումնարանի աւ.-ուսուցիչ Ե. Տէր-Ենոքեանը, որին և պարտական ենք ներկայացման աջողութիւնը, և տիկ. Հռիփսիմէ Բաբայեանց (Բագուից)։ Տիկնոջ խաղից կարելի էր եզրակացնել, որ իբրև թատերասէր ունի շնորհք, միայն այս անգամ նկատելի էր, որ դժուարանում էր Թիֆլիսի բարբառով խօսել։

Ներկայացումը աջող անցաւ շնորհիւ այն բանի, որ խմբի մէջ կային հին փորձված սիրողներ, որոնք և քննադատաբար դերերը բաժանել էին իրանց շրջանում։ Թէ ինչ եռանդով էին կպել գործին, կարելի է գաղափար կազմել նրանից, որ փորձերը տեւում էին մինչև գիշերվայ ժամը 3-ը։

Ներկայ սեզոնին տեղիս սիրողները որոշել են մի շարք ներկայացումներ տալ։

Ս. ք. Տէր-Յովհաննիսեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Քութայիս, 22 սեպտեմբերի

«Մշակի» վերջին համարներում տպված են Ջխար գիւղի ծխատէր Գափամաճեան քահանայի և Քութայիսի գործակալ Գէորգ քհ. Սօլաղեանի պատասխան-հերքումները Քութայիսից գրած իմ թղթակցութիւնների մասին։ Բայց որովհետև այդ քահանաները ոչ թէ իսկապէս հերքում, այլ կրկնում են իմ ասածները, տեղ-տեղ մեղանչելով ճշմարտութեան, ուստի ես անպատասխան եմ թողնում նրանց գրուածքները, քանի որ իրանցից ոչինչ դրական բան չեն ներկայացնում։

Թող գրեն ինչ ձեւով կամենան, սակայն իրողութիւնը մնում է իրողութիւն։

Ս. Նազարեան

—

Նուխի, 25 սեպտեմբերի

Ասացէք, խնդրեմ, հայ ազգի բաղդովը հետաքրքրվողներ, ինչ անել, ում դիմել մեր հասարակութեան ոտնակոխ արված իրաւունքները վերականգնելու համար. սովորեցրէք մեզ, հասկացրէք այդ։

Պատասխանեցէք խնդրեմ, Նուխու հայ հասարակութիւնը կազմում է հայութեան մէկ մասը թէ՞ ոչ. եթէ այո, ապա ինչո՞ւ նա չէ օգտվում այն բոլոր իրաւունքներից և արտօնութիւններից, որոնցից օգտվում են միւս քաղաքների հայ հասարակութիւնները ըստ մեր ծխական կանոնադրութեան։

Մենք ընտրել ենք ծխական հոգաբարձութիւն. արդ՝ լսել ենք, որ նա մինչև օրս դեռ չէ ստացել նախորդ հոգաբարձութիւնից դրամական հաշիւները. որ նա հակառակ ժողովրդի կամքի ու ցանկութեան պահում է իբրև ուսուցչուհի ջղային հիւանդութիւնով (падучная болѣзнь) բռնված մի օրիորդի՝ նոյնիսկ հակառակ իր կամքի. որ նա հեռացրել է պաշտօնից դպրոցների տեսչին առանց մի որևէ յարգելի պատճառի, միայն նրա համար, որ նա դպրոցների շահերին նախանձախնդիր է եղել, որ նա առանց մի իրաւունքի 300 ր. է տուել նոյն տեսչին իբրև բաւարարութիւն և այլն, և այլն։

Այս բոլորի հիման վրա մենք ամենաօրինական ճանապարհով ծխ. ժողով ենք գումարում մի քանի հարցապնդումներ անելու մեր ընտրած ծխ. հոգաբարձութեանը դպրոցներում կատարված անց ու դարձի շուրջը, խնդրելով այդ մասին քաղաքիս բարեկարգիչ քահանային։

Ժողովը նշանակվում է ամսիս 19-ին օրիորդաց դպրոցի դահլիճում, ուր հաւաքվում է մօտ 100 իրաւասու ծխական. սակայն 45—50 ձայնով ընտրված հոգաբարձութիւնը անվաւեր է համարում այդ ժողովը ծխականների թւի պակասութեան պատճառով։

Երկրորդ ժողովը նշանակվում է ամսիս 26-ին, և ահա այսօր ստացվում է (հոգաբարձութեան ջանքերով) Շուշու կոնսիստորիայի նախագահ Եղիշէ վ. Ահարոնեանից մի հեռագիր, որով արգելվում է ծխականներին ժողով գումարել և հարցապնդումներ անել հոգաբարձութեանը։

Այս բոլորից յետոյ՝ ասացէք խնդրեմ, սա բռնաբարում չէ՞ հասարակութեան ծխական իրաւունքների. արդեօք սա չէ՞ նշանակում, որ իրաւ հոգաբարձութիւնը մի խոշոր անարդարութիւն է կատարել և վախենում է լոյս աշխարհ գալուց. արդեօք սա չէ՞ նշանակում, որ կամ Եղիշէ վ.-ը չէ հասկանում մեր ծխ. կանոնադրութիւնը և նրա ոգին և կամ գիտակցաբար ծածկում է հասարակութեան աչքից կատարված անարդարութիւնը ի վնաս իրան առելի տեսչի և յօգուտ իրան հաճելի ուսուցչուհու և հոգաբարձութեան։

Էլ ո՞ւր դիմենք, ո՞ւմ վստահանանք. մնում է ակամայից այս բոլորը մամուլի նիւթ դարձնել. թերևս այսպիսով կարողանանք հասկացնել Եղիշէի վ.-ին և մեր հոգաբարձութեանը, որ մթութեան մէջ կատարված գործերը միշտ էլ ծածուկ չեն մնում։

Դիմում ենք դպրոցներիս նախկին տեսուչ՝ պ. Յ. Բալասանեանին և խնդրում բացատրել մեզ այն բոլոր շարժառիթները, որոնցից ստիպված թողել է պաշտօնը, որը անսայթաք կերպով վարել է երկու տարի։

Ծխականներ

—

Երևան, 24 սեպտեմբերի

Կար. Ղազարեանը «Մշակի» № 209-ում դատափետելով մէկը այն տգեղ սովորութիւններից, որ բուն է դրել հնուց հայ եկեղեցու մէջ, ինչպիսին է «գանձանակ շրջեցնելը», ցանկութիւն է յայտնում՝ «որ օր առաջ խսպառ վերացվէր եկեղեցիներից այդ սովորութիւնը և ռոճկի պատուաբեր հարցը շուտով իրականանար»։

Միթէ կար. Ղազարեանը ռոճկի հարցը գանձանակի հետ կապված է համարում։

Աւելորդ չենք գտնում ասել, որ գանձանակի փողը մի աւելորդ պատառ է եկեղեցու սպասաւորի համար։ Այդ սպասաւորը յատկապէս գանձանակի համար չէ մտել եկեղեցին։ Շատ քիչ բացառութեամբ միայն, այն էլ տեղ-տեղ, ստորին սպասաւորները բաւականանում են այդ գանձանակով։ Հետևապէս վերջիններիս և ռոճիկ տալու հարցերը չը պէտք է խառնել իրար հետ։ Լաւ կը լինէր, որ մի կոնդակով միանգամայն վերջ դրվէր եկեղեցում գանձանակ շրջեցնելու անպատուաբեր սովորութեանը։

Ռոճկի հարցի լուծումը եկեղեցու համար գուցէ տարիներ քաշէ, եթէ իրերի դրութիւնը այսպէս շարունակվի։

Մի քանի ապահովված եկեղեցիներում քաղաքներում եթէ նոյնիսկ դրականապէս լուծվի ռոճիկ տալու հարցը, բայց և այնպէս դարձեալ ցաւին դարման չի լինի...։ Թէև գանձանակ շրջեցնելը և կամովին տուրքը, փոխանակ ռոճկի, մէկը միւսից վատթար են և լաւ յօյսերով դէպի ապագան (ասենք հազուագիւտ դէպքում), հոգևոր կոչման մէջ մտնողին մի հարուածով նետում են մուրացկանութեան գիրկը և ստիպում միշտ աչքերը չռած պահել դէպի ուրիշի ձեռքը և գրպանը, սպասելով թէ որքան ողորմութիւն պիտի վճարէ, և միանգամայն հիասթափեցնում և մեծ մասամբ զզվեցնում նոյնիսկ ամենալաւին, ամենակրթվածին, բայց և այնպէս գանձանակ շրջեցնելը աւելի խայտառակ է.և դրա իսպառ վերացումը հէնց այժմ հրամայական է դարձել, առանց կապելու այդ հարցը ռոճկի հարցի հետ։

Ա. Տ.-Աբ.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, 27 սեպտեմբերի

Ս. Ստեփաննոս Նախավկայ վանքի գրաւված հողերի խնդիրը նոր փազիսի մէջ ընկաւ։ Յայտնի է «Մշակի» ընթերցողներին, որ օրեր առաջ թեմակալը, ռուսաց հիւպատոսարանի պաշտօնեայ Գիլտեբրանտը և ուրիշ անձնաւորութիւններ տեղւոյն վրա, Նախավկայում, քննութիւն են կատարել, և այդ հարցը վճռվելու էր հիւպատոսարանում։ Հարցի ձեւը փոխվեց. այժմ հիւպատոսը յայտնել է թեմակալին, որ դիմում անէ քարգուզարիային, ուր պէտք է վճռվի յիշեալ հարցը, իբրև պարսկահպատակ ժողովրդի սեփականութեան հարց. իսկ ինքը հիւպատոսը կը պաշտպանէ իր հպատակ, հողերը տիրապետող Մամէդովի դատը։ Թեմակալի դիմումները հիւպատոսին, որ՝ ըստ առաջնոյն՝ հիւպատոսարանում կարգադրվի, մնացին ցայսօր անհետեւանք, և այս դրութեան մէջ ես թեմակալը մեկնեց Ղարադաղ։

Եթէ լսենք այլ ընդ այլոյ զրոյցների ու կարծիքների, հիւպատոսի ցուրտ վերաբերմունքը թեմակալի հանդէպ ծագել է այն հանգամանքից, որ Կարապետ եպիսկ. Սալմաստում, Խոյում և այլ տեղերում, ուր կատարել է իր այցելութիւնները, ղեկավարվել է թայֆայականների զինված խմբերից։ Մինչև անգամ եղել են տեղեր ու դէպքեր, երբ թայֆաները յանուն սրբազանի խոստումներ են արել ու իրանց պաշտպանութիւնը խոստացել ամեն մի խնդրում։ Այս բոլոր պարագաները, ըստ ասութեան, տեղեկագրել են Խոյից Թաւրիզ, և սրանք դրդապատճառ են համարվում հիւպատոսի ցուրտ յարաբերութեան։

Բոլոր լրագրութիւնից յայտնի է անշուշտ ամբողջ Պարսկաստանի այսօրվայ վտանգաւոր կացութիւնը՝ արեւելքից արեւմուտք, հիւսիսից հարաւ. ամենուրեք գործում են աւազակախմբերի սուրն ու հուրը։ Ռէակցիոն ոյժերը հետզհետէ ուժեղանում են, կարծես, և հեռու չէ, որ երկիրը ընկնի այս ու այն դիկտատորի ձեռքը։ Արդաբիլի շրջանը շահսէվանների ձեռքին է դեռ. Թեհրան-Թաւրիզի ճանապարհը բոլորովին անապահով. նոր 200 ձիաւոր գնացին պահպանելու համար։ Թալանվեցին պօստը, ճանապարհորդներ և նոյնիսկ Ուրմիի նախկին դատաւոր աւազակապետ Մէօհթէշէմը կողոպտվելու երկիւղից սպասում է Թաւրիզից հեռու մի գիւղում։ Միւս կողմից մէջլիսը, նահանգներում՝ անջումանները ոչնչից ոչինչ չեն շինում, և աւելի շուտ իրանց անտակտ գործելակերպով կամ աւելի շուտ անգործութեամբ նպաստում են երկրի անիշխանական դրութեան։ Կառավարութեան գանձարկղը դատարկ է, և յոյս են դրել օր օրի վրա աճող տուրքերի գանձման վրա։ Յուսահատութեան անդունդի եզերքին կանգնած ժողովուրդը հնար չունի, ինչ անէ. և որպէս այսպիսին՝ դատապարտվել է անյայտութեան և անստուգութեան։

Թէև խոլերան մուտք չը գործեց տակաւին, բայց կան ուրիշ մահաբեր հիւանդութիւններ՝ տիֆ, դիֆտերիտ և բկացաւի այլ տեսակներ։

Հայկազուն

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Սօցիալիստիկական կուսակցութեան գեներալ-խորհուրդը սեպտ. 23-ի նիստում 4 ժամ տեւող վիճաբանութիւններից յետոյ որոշեց Բրիւսսէլում, գերմանական կայսրի գալստեան նախօրեակին, կազմել բողոքի միտինգ՝ բելգիական և գերմանական սօց.-դեմօկրատիայի համերաշխութիւնը արտայայտելու նպատակով, նաև գերմանական սօց.-դեմ. կուսի եղանակները պարզելու համար։ Ապա վճռված է դիմել հրովարտակով երկրին կայսրի գալստեան առիթով։ «Vos. Ztg.»-ի թղթակցի ասելով, նիստում մարտնչում էին երկու հոսանքներ, ըստ որում ձախ թեւը յաղթութիւնը տարաւ։

Սօցիալիստների յիշեալ վճիռն ի նկատի ունենալով, Բրիւսսէլ քաղաքի կոմէնդանտը դիմեց խնդրելով հարեւան քաղաքների զօրահրամանատարներին՝ օժանդակ զօրքեր ուղարկել կայսրի Բրիւսսէլում եղած ժամանակ։

◆ **Աւստրօ-թիւրքական Համաձայնութիւն.**— Վիէննայում հրատարակվող «Die Zeit»-ը, որ ռոհասարակ լաւատեղեակ օրգանի համբաւ ունի, հաղորդում է՝ իբր համաձայնութիւն է կնքվել Թիւրքիայի և Աւստրօ-Ունգարիայի միջև։ Այդ համաձայնութեան հիմնական կէտերը շուրջփակվում են այսպէս. Աւստրօ-Ունգարիան երաշխաւորում է Թիւրքիային հակաթիւրքական դաշնակցութեան ամեն տեսակ հետեւանքներից։ Իր կողմից Թիւրքիան պարտաւորվում է չը մտնել եռապետեան դաշնակցութեան թշնամի որևէ պետութեան միութեան մէջ։ Այս համաձայնութիւնը, «Zeit»-ի ասելով, թիւրքական համաձայնութիւնից առաջ կնքվեց, իսկ վերջինս հետեւեց աւստրօ-թիւրքական համաձայնութեանը։

◆ **Թիւրքական ազգային բանկ.**— Թիւրքաց լրագիրները հաղորդում են, որ Կ. Պոլսում տեղական դրամատէրերը հիմնում են թիւրքական բանկ 550 հազար ֆունտ դրամագլխով։ Բանկի նպատակն է ազատել Թիւրքիան արեւմտեան-եւրօպական երկրների տնտեսական կախման դրութիւնից։

◆ Ֆրանսիական լրագիրների ասելով, երկրագործութեան մինիստրը Բրիանի կաբինէտից հրաժարվելու է հիւանդութեան պատճառով. մինիստրի պորտֆէյլը ստանալու է արմատական Կլօցը՝ մաքսային մասնաժողովի նախագահը։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

4 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Խոլերայով հիւանդացան 10, մեռան 3, մնում են 199 հոգի։

Կ. ՊՕԼԻՍ։ Մի շաբաթում խոլերայով հիւանդացան 13, մեռան 7 հոգի,

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ։ Ի յաւերժացումն Ռոմանովների տան 300-ամեակի և գիւղացիների ազատագրութեան 50-ամեակի—քաղաքային դուման որոշեց միջնորդել բանալու Նիժնի-Նովգորոդում պոլիտեխնիկում, յատկացնելով 500,000 ր. և 5,000 սաժէն քաղաքային հողաբաժին։

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՎՍԿ։ Զեմստվօն ի յիշատակ գիւղացիների ճորտութիւնից ազատման յատկացրեց 25,0000 ր. գաւառում Ազատարար Կայսրի անուան երկդասեան դպրոցներ հաստատելու համար։

ՆԻՒ-ԵՕՐԿ։ Երէկ երեկոյեան Սիասկօնսէտից անթել հեռագրով Վէլմանից ստացվեց հետեւեալ տեղեկութիւնը. «Ամեն ինչ լաւ է. դիմեցինք դէպի հիւսիս, ճիշդ չը գիտենք թէ ո՞րտեղ ենք գտնվում»։

Ժամ. Խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆ

Օրէ-ցօր շատացող պահանջը ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻ վերաբերմամբ առիթ է տուել վերջին ժամանակներս երեան գալու բազմաթիւ փոքրարժէք կեղծիքներ, որոնք առաջարկվում են ՍՊԵՐՄԻՆԻՆ նմանող զանազան անուններով (սպերմատին, սպերմինօլ, սպերմօլ, սեկարօվեան հիւթ, հեղուկ և այլն) և միևնոյն ժամանակ կեղծողների կողմից առաջարկվում են ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻՆ համահաւասար և նոյնիսկ նրանից բարձր ազդեցութիւն ունեցող դեղ։ Կեղծողները յաճախ լինում են այնպիսի մարդիկ, որոնք բժշկականութեան հետ ոչ մի առնչութիւն չունեն, օրինակի համար՝ դեղավաճառ և պարֆիւմէրի խանութներ ունեցողները և այլն։ Հասկանալի է, որ այդօրինակ կեղծիքները բժշկականութեան և գիտութեան հետ առհասարակ ոչ մի կապ չունեն, սակայն, որպէսզի գիտական բնաւորութիւն տրված լինի նրանց, կեղծողները իրանց ռէկլամների մէջ բերում են գրականութեան և բժիշկների դիտողութիւնները ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻ ԱԶԴԵՑՈՒԹԵԱՆ մասին՝ մոլորութեան մէջ գցելով ոչ միայն հիւանդներին, այլ և պ. պ. բժիշկներին։

Ի նկատի ունենալով այդ, մենք պարտք ենք համարում ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼ յիշեալ կեղծիքներից այն անձերին, որոնք օգտվում են ՍՊԵՐՄԻՆԻՑ։ Գրականութեան մէջ գտնվող բոլոր բազմաթիւ դիտողութիւնները գիտնականների և բժիշկների կողմից՝ արված ՍՊԵՐՄԻՆԻ բուժիչ ազդեցութեան մասին, այն է՝ նեվրաստենիայի, սեռական թուլութեան, ծերութեան, իստերիայի, նեվրալգիայի, արեան պակասութեան, թոքախտի, սիֆիլիսի, սնդիկային բժշկութեան հետեւանքների, սրտի հիւանդութիւնների (չաղութիւն, սրտի պնդախտութիւն, սրտի բաբախումն, պէրէբօյ, միօկարդիտ), զարկերակի կարծրացման, ալկօհօլիզմի, ողնաշարի հիւանդու-թեան, կաթուածների, հիւանդութիւններից թուլացած լինելու, յոգնածութեան և այլ հիւանդութիւնների ժամանակ—վերաբերում են ԲԱՑԱՌԱՊԷՍ ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻՆ, հետեւաբար և խնդրում ենք գնելու ժամանակ ուշադրութիւն դարձնել „ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻ" անուան և ֆիրմայի վրա, որովհետև ուրիշ պատրաստվածները ոչ այլ ինչ են՝ եթէ ոչ ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻՆ նմանեցված կեղծիքներ, որոնք՝ ազդեցութեան տեսակէտից՝ ոչ մի առնչութիւն չունեն նրա հետ. քանի որ միակ իսկական սպերմին ներկայանում է ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻՆ։ Սրուակը 3 ռուբ.։ Գրականութիւնը՝ ուղարկվում է ըստ առաջին պահանջման ձրի։

ОРГАНОТЕРАПЕВТИЧЕСКІЙ ИНСТИТУТЪ

ՊՐՈՖԵՍՍՕՐ ԴՕԿՏՕՐ ՊԵԼԻ ԵՒ ՈՐԴԻՔ

Մատակարար ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ պալատի—Ս.-Պետերբուրգում։

(П. 88448) 993. 8—3

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—11 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Պ. Ս. ՁԻԼԲԵՐՇԱՑ—12½—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ՁԻԼԲԵՐՇԱՑ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՆԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Վճարը 50 կ.։ Ջրաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
103. 0—104

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ
Ս. Ջ. ԽԻՋԱՆԵԱՆ
Վելեամինովսկայա № 14.
Ընդունելութիւնը՝ 4—6 ժ. երեկոյեան։
(չ. ու. կ.) 1133. 10—4

Типографія „Экономія" съ С-ми въ Тифлисѣ
Ав. Мугдусіакопова
Исполняетъ срочно, аккуратно и чисто, по возможности дешево слѣдующія работы: возможныя типографскія, съ самыхъ крупныхъ и до самыхъ мелкихъ заказовъ, печатаніе книгъ, большихъ журналовъ, газетъ, брошюръ, афишъ, объявленій, визитныхъ карточекъ. и т. д.
ТЕЛЕФОНЪ № 228
ТИФЛИСЪ, Большая Ванкская ул., № 3. домъ Ризева.

КРЕМЪ НЕЛЛИ
NELLY'S CREAM.
Англійская аристократія предпочитаетъ всѣмъ другимъ средствамъ именно „Кремъ Нелли", какъ лучшее для смягченія кожи лица, рукъ и бюста. Въ Лондонѣ расходится до 1.000.000 бан. ежегодно.
Кремъ Нелли уничтожаетъ всѣ недостатки кожи, загаръ, веснушки, пятна и т. п.
Продажа у Мюръ и Мерилизъ, Гетлингъ, Акц. О-ва К. Эрманъ и Ко и пр., а также во всѣхъ апт. и парфюмерн. магаз. Россіи.
Одной банки достаточно, чтобы убѣдиться въ его поразительномъ дѣйствіи.
Цѣна 1 р. 25 к. и 2 р. 25 к.
Въ провинцію налож. платежемъ на 50 к. дороже.
Для всей Россіи единств. складъ МОСКВА, Пречистенка, Б. Власьевскій пер., д. 3.
(М.130700) 423. 40—22

Ռուս լեզուի մէջ հմուտ և մաքուր առոգանութեամբ
ՄԻ ՓՈՐՁՎԱԾ ՈՒՍՈՒՑԻՉ,
որ երկար տարիներ եղել է Կովկասում և Կովկասից դուրս հայ և ռուս դպրոցներում, ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է ԱՇԱԿԵՐՏՆԵՐ պետական և հայ դպրոցների համար։
Դիմել «Մշակի» խմբագրութեան։
(օ. մ.) 1130. 20—5

Մամուլի տակից դուրս եկաւ
ԴԱՍԱՏԵՏՐ ԿՐՕՆԻ Բ. տարի (պատկերազարդ)
ԸՍՏ ՆՈՐԱԳՈՅՆ ԾՐԱԳՐԻ
Երրորդ տարին մամուլի տակ է, պատկերազարդ)
Դիմել «Գիր» գրավաճառանոց՝ Веліаминовская 7. և ինձ՝ Бебутовская 29.
Սահակ ա.-ք. Սահակեան
(ա. օ.) 1141. 5—5

ՆԻԺ (ուտիական) գիւղի համար հարկաւոր է
ՄԻ ՓՈՐՁՎԱԾ ՈՒՍՈՒՑԻՉ
ԿԱՄ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ
որ պիտի պարապվի դպրոցիս նախակրթարանի (բանաւոր) հետ, շաբաթական 18—21 դաս, բանաւոր կերպով։ Տրվում է 200 ր. ռոճիկ. ցանկացողները թող շտապեն դիմել դպրոցիս աւագ-ուսուցիչ Ս. Իսրայէլեանին այս հասցէով՝ Ниджъ (Нухинс. уѣзда), Смотрителю С. Исраелянцу.
Նախագահ հոգաբարձութեան Նիժի ս. Մեսրոպեան դպրոցի՝ Խ. Անտոնեան
1150. 2—2

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Մասնագէտ սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւնների։
Ընդունելութիւնը ամեն օր { 12½—2 ժ. ցերեկվայ
5—7 ժ. երեկոյեան
Կանանց համար՝ 2—3 ժ. ց.
Հասցէն { Սօլօլակ, Բեբուտօվսկայա, № 33.
Сололаки, уголъ Бебутовской и Паскевича, 33.
(չ. ու. կ.) 1134. 100—16

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
БАКУ, уголъ Красноводск. и Меркурьевск., телеф. № 10—56.
Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական և առեւտրական կրթութիւն և պատրաստել հմուտ հաշւապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։
Կուրսերում աւանդվում են՝ 1) Առեւտրական թւաբանութիւն և թւաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշւապահութիւն արդիւնաբերական, գործարանական, առեւտրական և բանկային. 3) Առեւտրական թղթակցութիւն. 4) Առեւտրական տնտեսագիտութիւն. 5) Առեւտրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղումն ձեռագրի). 7) Ուսուցումն գրող մեքենայի վրա։ Ցանկացողների համար՝ առանձին վճարով լեզուներ և ստենոգրաֆիա։
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 20-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից՝ ամենայն օր կուրսերում, առաւօտեան ժամը 9—12-ը և երեկոյեան 4—7-ը։ Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը (программа) տրվում և ուղարկվում են ՁՐԻԱԲԱՐ։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ Баку, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову. (չ.կ.) 884. 20—20

Типографія „Экономія" Большая Ванкская № 3.